ԵՐԵՎԱՆ

#4(82)
2023

Ամենաթանկը

antares@antares.am
www.antares.am

+374 10 58 10 59

Կարդալը վնասակար է տգիտությանը

Երիտասարդ

ԴԱՐԱՆ
ԳՐԱԽԱՆՈՒԹ

Հիպոլիտ Սահակի

Երևանի թաքնված գանձերից մեկը՝ Երկրորդ Մասիսի երկու վիշապաքարերից մեկը

Երբ ամբողջ կյանքդ ապրում ես Երևանում, գայթակղություն է առաջանում պնդելու, թե լավ գիտես քաղաքը: Դե, Հյուսիսային պողոտան տարբերում ես Պրոսպեկտից, գիտես՝ ինչպես «Բարեկամությունից» հասնել «Հրապարակ» («Հրապարակ» ասելով՝ որպես Երևանը լավ իմացող մարդ, նկատի ունես Հանրապետության հրապարակը), հավանաբար գիտես, թե որն է «ռայկոմը» (թեև բուն այդ հիմնարկն արդեն գոյություն չունի), հնարավոր է նույնիսկ, որ տարբերում ես Երկրորդ մասիվը Յոթերորդից ու գիտես, թե Բաղրամյան պողոտայի որ առանձնատանն է մի տևական ժամանակ գտնվել ամերիկյան դեսպանատունը (եթե ծնվել ես 20-րդ դարից առաջ, հավանաբար հասցրել ես նույնիսկ տեսնել այդ շենքի մոտ շարված հարյուրավոր մարդկանց հերթերը):

Բայց երբեմն Երևանը կարող է թաքնվել սեփական միֆերի ու առասպելների արանքում: Այնպես որ մեր այս «հին, բայց միշտ երիտասարդին» իսկապես ճանաչելու համար պետք է փնտրել նրան սովորական երթուղիներից ու համայնապատկերներից դուրս: Պետք է մտնել նախկին խորհրդային հիմնարկությունների շենքերն ու ուսումնասիրել խճանկարների՝ արդեն կարծես թե մոռացված, բայց, միևնույն է, անչափ տպավորիչ նմուշները: Պետք է տեղից տեղ գնալիս մտնել-անցնել բակերով: Պետք է Կենտրոնի բացիկային փողոցներից բացի շրջել նաև ծայրամասերում: Պետք է արտասահմանցի հյուրերին Մատենադարան ուղեկցելիս բացի հազարավոր ձեռագրերից ցուցադրել նաև մուտքի մոտ կանգնած վիշապաքարը (իսկ հետո նաև հերթով գնալ-տեսնել բոլոր երևանյան վիշապաքարերը, քանի որ դրանք անհավատալի գանձեր են): Պետք է չմոռանալ, որ Նոր Նորքի մասիվներից հարյուրամյակներ առաջ մենք ունեինք Հին Նորք, որը դեռ այնտեղ է, մեր ամենօրյա երթուղիներից մի քիչ դուրս, բայց կանգուն ու պատմությամբ լեցուն:

Ի վերջո, Երևանը նախկին անշտապ, դանդաղաշարժ, հանդարտ վայրը չէ, որտեղ տարին մեկ է մի նոր բան կատարվում: Երևանը՝ ժամանակին համահունչ, արագաշարժ, դինամիկ փոփոխվող, նոր ձևեր ընդունող ու նոր տեսքով մարդկանց ներկայացող երևույթ է, որից հետ չմնալու համար մենք էլ պիտի ջանք գործադրենք: Իհարկե, եթե ուզում ենք պեղել, գտնել իրական Երևանը, ոչ թե «Բարեկամություն»–Կասկադ–«ռայկոմը»:

Գլխավոր խմբագիր
Արտավազդ Եղիազարյան

ՔԱՂԱՔԱՄԵՋ

04 Խառը կանաչի
Ամսվա ամփոփում
Նոր գրքեր, նոր նստավայրեր, նոր կայքեր:

05 Երկինք
Ֆլայ Արնա
Առազին մեկ տարվա ամփոփումը:

06 Նոր գիրք
Խավարի թագավորը
Լիլիթ Ալթունյանի նոր մանկական պատկերագիրքը:

12 Թանգարան
Թաքնված թանգարաններ
Նանսենը, կապը, բժշկությունը և Առազին հանրապետությունը՝ հեղափոխիչ, բայց ֆիզ հայտնի թանգարաններում:

18 Սեփական փորձ
Քաղաքապետարանի անտեսանելի հնաբնակները
Մարդիկ, որոնք նվիրել են իրենց կյանքը քաղաքին:

24 Արվեստ
Քաղաքային դեկորացիաներ
Հինգ ցարմանալի խեանկարային սրեոնագործություն, որոնք կարելի է տեսնել սեփական աչքերով Երևանի տարբեր ծայրերում:

ԹԱՔՆՎԱԾ ԵՐԵՎԱՆ

08 Թանգարան
Երևանի պատմության թանգարան
Ինչպես ԵՊԹ-ն գրավ իր մշտական տեղը:

30 Հին ժամանակներ
Սակրալ լեռներից դեպի պրոֆան քաղաք
Ինչպես էին վաղնզական վիշապաքարերը բերվում Երևան և որտեղ դրանք կարելի է տեսնել:

36 Ճարտարապետություն
Խորհրդային մոդեռնիզմի թաքնված ուղերձը
Խորհրդային մոդեռնիզմի երևանյան գլուխգործոցները՝ Նվարդ Երկանյանի «Բեյոնե տեսիլքում»:

40 Նստավայր
Ռելոկանտական վայրեր
Շրջում ենք այն սրճարաններով, ակումբներով ու խանութներով, որոնք վերջին մեկուկես տարում հիմնել են ռուսասպանի ներգաղթյալները:

46 Այլընտրանք
Գարաժային ապրումներ
Հինգ պատմություն այն մասին, թե ինչպես կարող է փոխվել տիպիկ երևանյան ավտոտնակի գործառույթը:

52 Հին Երևան
Նորքի կամուրջը
Գրող Արամ Պաչյանը պատմում է հին Երևանի բազմաթիվ կոթողներից մեկի՝ հին Նորքի կամուրջի մասին:

54 Պատեր
Նկարչության բաց դասեր
Ուշադիր զննել ենք Երևանի պատերը, որպեսզի պատմենք, թե ինչ ակնհայտ ու մի քիչ էլ թաքնված գրաֆիտիներ կան:

60 Կադրերի բաժին
Երևանյան սթրիթ արտ, 2010 թ.
Մի քանի գրաֆիտի, որոնք այլևս չկան:



Շապիկ՝
Արմինե Շահբազյան

ԵՐԵՎԱՆ #4(82) | 2023

ԵՐԵՎԱՆԻ
ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

Թողարկման հովանավոր

Գլխավոր խմբագիր՝
ԱՐՏԱՎԱԶԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Արտ-տնօրեն՝
ՆՈՆՆԱ ԻՍԱՋԱՆՅԱՆ
Թողարկող խմբագիր՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Գրական խմբագիր՝
ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Սրբագրիչ՝
ՀԱՍՄԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ
Ֆոտոմշակում՝
ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Էջադրում՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հեղինակներ՝
Էլեն Բաբայան, Դիանա Մարտիրոսյան, Վիգեն Գալստյան, Նվարդ Երկանյան, Արսեն Բոբոխյան, Արամ Պաչյան, Մարիա Գունկո, Շուշանիկ Փափազյան, Մարգարիտ Միրզոյան, Արեգ Դավթյան, Մարիամ Ալոյան

Լուսանկարներ և պատկերազարդումներ՝
Հարություն Մալխասյան, Բիայնա Մահարի, Նվարդ Երկանյան, Արամ Պաչյան, Մարիա Գունկո, Երևան քաղաքի պատմության թանգարանի արխիվ, Էրիկ Ստեփանյան/Yerevan Productions, @yerevantropics

Տառատեսակ
Arek Armenian by Rosetta

«Քաղաքի ամսագիր» ՍՊԸ
Տնօրեն՝
Արտավազդ Եղիազարյան

Հայաստանի Հանրապետություն, 0014, Երևան, Պարույր Սևակ 8
Էլ. փոստ՝ evnmag@gmail.com
Առցանց՝ evnmag.com

facebook.com/YerevanCityMagazine

instagram.com/evnmag

© 2011-2023 **«ԵՐԵՎԱՆ»**

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«ԵՐԵՎԱՆ» ապրանքային նշանի իրավատեր է հանդիսանում Արտավազդ Եղիազարյանը:

Համարը տպագրության է հանձնվել՝ 10.10.2023

Տպագրված է Անտարես տպագրատանը, 0009, Երևան, Մաշտոցի 50ա/1

Տպաքանակ՝ 3000 օրինակ

Ամսագիրը ղեկավարվում է «Զանգվածային լրատվության մասին» և «Գովազդի մասին» ՀՀ գործող օրենսդրությամբ:

Ամսագրի նյութերը վերատպվում են միայն իրավատիրոջ գրավոր համաձայնությամբ: «ԵՐԵՎԱՆ» ամսագրին հղում կատարելը պարտադիր է:

«ԵՐԵՎԱՆ» ամսագրի ստեղծման գաղափարը պատկանում է «Երևան Փրոդաքշնս» ՓԲԸ-ին:

Նվիրիր
մեծ
ընտրություն

dalma
garden mall

նվեր քարտ

Արձակուրդ

Հանգստի 3 տարբերակ՝ Թբիլիսիի ibis հյուրանոցներում

Ցանկացած ճամփորդության ժամանակ կարևոր է, թե որտեղ եք կանգ առնում: Հյուրանոցը ոչ միայն գիշերակացի վայր է, այլև միջնորդ և օրվա լավ սկզբի ոգեշնչող: ibis Styles Tbilisi Center, ibis budget Tbilisi Center և ibis Tbilisi Stadium հյուրանոցները հենց այդպիսի վայրեր են: Դրանք առանձնանում են վառ, բացառիկ կոնցեպտներով, հաճելի գներով և ընկերասեր միջավայրով: Սրանցից յուրաքանչյուրը կարող է դառնալ հրաշալի սկիզբ՝ Թբիլիսյան զբոսանքների համար: ibis Styles Tbilisi Center-ն առանձնանում է բացառիկ, չկրկնվող դիզայնով և իդեալական է ընտանիքով ճամփորդողների համար: ibis budget Tbilisi Center-ը հատկապես հարմար կլինի ակտիվ ճամփորդների համար, որոնց համար կարևոր է հյուրանոցի աշխարհագրական դիրքը (Առաջին հանրապետության հրապարակի և Վերե զբոսայգու հարևանությամբ), գիշերակացի հարմարավետ պայմաններն ու հյուրընկալ սերվիսը: Իսկ ibis Tbilisi Stadium-ը՝ «Դինամո» մարզադաշտի հարևանությամբ, ունի հարմարավետ ու մեծ նախասրահ, որտեղ կարելի է հանգիստ աշխատել, իսկ նախաճաշերը հասանելի են առավոտվա 4-ից:

Համացանց

Արցախցիների աջակցության նախաձեռնություններ

reArmenia հարթակը հավաքել է տեղահանված արցախցիների աջակցության նախաձեռնությունները: Ցանկում այս պահին կա գրեթե հինգ տասնյակ նախաձեռնություն՝ պետականից ու միջազգայինից մինչև անհատական: Ցանկը պարբերաբար թարմացվում է: Բոլոր ցանկացողները կարող են առաջարկել իրենց աջակցությունը:

Նոր նստավայրեր

Jungle Specialty Coffee, Սարյան 4

Սարյանում սրճարանները երբեք շատ չեն լինում, ինչպես և՝ սուրճը: Jungle-ը, սակայն, առաջարկում է ոչ թե սովորական սուրճ, այլ, այսպես կոչված, սփեշըլթի: Այս եզրույթն օգտագործում են ամենաբարձր որակի սուրճի մասին խոսելիս: Բացի այդ, այստեղ ոչ միայն տալիս են լավ համեղ սուրճ, այլև խոսում են այդ ըմպելիքի մասին, պատմում ու քննարկում: Սրճարանի ինստագրամում հատուկ նշվում է, որ այն բաց է նաև ընտանի կենդանիների համար:

Astghik Cafe, Հրաչյա Քոչար 16/6

Եզնիկ Կողբացի փողոցում արդեն մոտ կես տարի գործող սրճարանի նոր կետը՝ Կենտրոնից դուրս: «Աստղիկը» նույնպես սուրճին չափազանց լուրջ է վերաբերվում: Այստեղ տեղի են ունենում դասախոսություններ ու գործնական աշխատանքներ սուրճի մասին: Օրինակ, առաջին իսկ օրը սրճարանում կազմակերպեցին քափինգ. դա սուրճի դեգուստացիան է, որն օգնում է բացահայտել ամեն տեսակի համն ու բույրը: Պարբերաբար «Աստղիկում» լինում են հատուկ հյուրեր, որոնք առաջարկում են սեփական սրճային ըմպելիքները:

Նոր գրքեր

Սաղաթել Հարությունյան, «Ծիպիլին, Սիմբական և ծիծաղը», newmag

Հեքիաթ-վիպակ երկու չար, բայց չարությունը կորցրած ծեր կախարդների՝ Ծիպիլիի ու Տիմբակայի մասին: Նրանք կորցնում են չարություն անելու ուժը, չեն հանձնվում ու որոշում են վնասել երեք ընկերների ու ապացուցել՝ դեռ չար կախարդներ են: Բայց դա չի հաջողվում: Երեխաները փրկվում են, վհուկներն էլ դառնում են Ամանորին նվերներ բաժանող բարի կախարդներ: Խորհրդահայ մանկագրության ամենանշանավոր վիպակներից մեկը նոր կյանք է ստացել newmag-ի այս վերահրատարակման միջոցով: Ընդ որում, հեքիաթի ոգին իրապես պահպանելու նպատակով այստեղ նույնությամբ վերարտադրված են նաև Ռուբեն Գրիգորյանի նկարազարդումները:

Արմեն Շեկոյան, «Երևան հյուրանոց», Վերնատուն

Հրատարակությունն ընդգրկում է բանաստեղծ և արձակագիր Արմեն Շեկոյանի՝ 2003 թվականին լույս տեսած համանուն ժողովածուն՝ փոքր խմբագրումներով: Այն համալրված է նաև ձեռագիր և մինչ օրս անտիպ բանաստեղծությունների ընտրանիով՝ երկու կարմիր գրքույկներից, որոնցում հեղինակն առանց հատուկ հաճախականության և ընդմիջումներով գրել է դեռևս 1980-ականներից:

Մարգարիտ Դերանց, «Գմբեթավոր հովանոցը», Անդրարես

Վեպի սյուժեն, ներառելով Արցախյան առաջին պատերազմից մինչև 44-օրյա պատերազմն ու դրանից հետո տեղի ունեցած իրադարձությունների հատույթը, տարբեր միջավայրերի, տարբեր բնավորությունների ու կենսագրությունների, երևույթների՝ տարբեր դիտակետերից ընկալումների համադրմամբ վերհանում է մի ամբողջ ժամանակաշրջանի պատկեր՝ թիրախային ընդհանրացումներով:

ազգային ավիափոխադրողը՝ ամենահուսալի թևերով

Անվտանգություն, հարմարավետություն ու մատչելիություն. գործունեության մեկնարկից ի վեր ազգային ավիափոխադրող Fly Arna-ի համար առաջնային են հենց այս սկզբունքները: Ընդամենը մեկ տարի առաջ հիմնադրված ավիաընկերությունը հասցրել է մի շարք ձեռքբերումներ ունենալ, սակայն ամենամեծ ձեռքբերումն է համարում վստահությունը, որ վաստակել է իր ուղևորների կողմից:

Ֆլայ Արնա

Ավիաընկերությունն այս պահին Հայաստանում միակն է, որ հաջողությամբ անցել է Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (IATA) հեղինակավոր IOSA աուդիտը՝ դասվելով աշխարհի ամենաանվտանգ ավիաընկերությունների ցանկին:
Սա, իհարկե, մեծ ձեռքբերում է ընդամենը մեկ տարվա գործունեությամբ ավիաընկերության համար, քանի որ ամենաբարդ՝ IOSA աուդիտը հաճախ չեն կարողանում անցնել նույնիսկ երկար տարիների գործունեությամբ ավիաընկերությունները: IOSA օպերատոր դառնալը Fly Arna-ին ևս մեկ քայլով մոտեցնում է «հայկական թևերով» եվրոպական շուկա դուրս գալու իր նպատակին:
Վերջերս էլ «Ֆլայ Արնան» Սոչիի միջազգային օդանավակայանի կողմից դասվել էր ամենաճշտապահ ավիաընկերությունների շարքին: Ուղևորները կարող են վստահ լինել, որ ազգային ավիափոխադրողի հետ թռիչքներն իրականացվում են ոչ միայն ճիշտ ժամանակին, այլ նաև նրանք ամուր և անվտանգ ձեռքերում են:
«Ֆլայ Արնան» ջանք ու եռանդ չի խնայում հայկական միակ ազգային ավիափոխադրողի պատվաբեր անվանը հավատարիմ մնալու համար: Ազգային ավիափոխադրողը մեծապես կարևորում է, որ ուղևորները եռագույնով ներկված ինքնաթիռում առաջին իսկ պահից զգան հայկական շունչը. հայերեն ողջունող օդաչուներ, հայերենով հաղորդակցվող բորտուղեկցորդներ, մենյուում ընդգրկված հայկական խմիչքներ:

«Ֆլայ Արնան» մեծ նշանակություն է տալիս նաև Հայաստանում ավիացիայի նկատմամբ երիտասարդների հետաքրքրվածության բարձրացմանը: Մինչ շատերը մի կողմ են դրել բորտուղեկցորդ դառնալու մանկության անիրագործելի թվացող երազանքը և գրասենյակում համակարգչի առջև նստած երազում են թռիչքների մասին, «Ֆլայ Արնա»-ն այդ երազանքին հասնելու իրատեսական ճանապարհ է առաջարկում: Մինչ այս պահը ավիաընկերությունը հնարավորություն է ընձեռել շուրջ 70 երիտասարդի ձեռք բերել բորտուղեկցորդի մասնագիտություն և կարիերան ավիացիայում սկսել հայկական ազգային ավիաուղիների հետ: Տարոն Շոլինյանը մեկն է այդ մարդկանցից: Տարոնը, ով այժմ «Ֆլայ Արնա»-ի բորտուղեկցորդ է, տարիներ առաջ Վանաձորի մանկավարժական համալսարանն ավարտելուց հետո հյուրատուն է բացել հայրենի Ալավերդիում, սակայն այն չի արդարացրել իր հույսերը, ուստի որոշել է հեռանալ Հայաստանից՝ նոր աշխատանքի փնտրտուքներով:

«Աշխատում էի Չինաստանում, երբ հարազատներիցս իմացա, որ ազգային ավիաընկերություն է բացվում Հայաստանում: Համոզեցին, որ վերադառնամ և մասնակցեմ ավիաընկերության «բաց դռների օրվան»: Գնացի, տվյալներս գրանցեցին և միանգամից հարցազրույցի հրավիրեցին: Անգլերենի և մաթեմատիկայի գրավոր քննություն հանձնելուց հետո զանգեցին և ասացին, որ ընդունվել եմ ու կարող եմ մասնակցել մասնագիտական խորացված դասընթացներին: Դասընթացների շրջանը տևում է մոտ մեկ ամիս՝ երկու շաբաթ Հայաստանում, երեքը՝ ԱՄՆ-ում՝ Շարժայում: Քանի որ «Ֆլայ Արնան» Air Arabia ընկերությունների խմբի անդամ է, մենք նախքան ազգային ավիաընկերությունում աշխատանքի անցնելը հնարավորություն ենք ունենում գործնական թռիչքներ իրականացնել Air Arabia ավիաուղիներում: Սա շատ մեծ առավելություն է, քանի որ հայրենիք վերադառնում ենք արդեն գիտելիքների և գործնական հմտությունների հարուստ պաշարով»,– պատմում է Տարոնը:

Սա միակ դեպքը չէ, որ «Ֆլայ Արնան» Հայաստան է բերում հայ երիտասարդների: Ազգային ավիաընկերության աշխատանքի գրավիչ առաջարկները և հայրենիքում ապրելու ու աշխատելու ցանկությունն այստեղ են բերել արդեն շատերին՝ օդաչուից մինչև բորտուղեկցորդ ու այլ մասնագետներ:
«Ֆլայ Արնան» նաև հետևողականորեն աշխատում է չվերթների աշխարհագրության ընդլայնման ուղղությամբ՝ բարձրացնելու Հայաստանի ներկայացվածությունը համաշխարհային ավիացիոն շուկայում:
Ավիաընկերության հաջողություններին կարող եք հետևել «Ֆլայ Արնա»-ի պաշտոնական կայքէջում՝ www.flyarna.com: ■

Խավարի թագավորը

Լույս է տեսել հեղինակ նկարազարդող Լիլիթ Ալթունյանի («Կապույտ աղվեսը», «Երաժիշտ հրեշը») նոր՝ «Խավարի թագավորը» պատկերագիրքը: ԵՐԵՎԱՆը գիրքը քննարկել է հեղինակի, ինչպես նաև լոգոպեդի և մանկական հոգեբանի հետ:

Մարիամ Ալոյան

Նոր գիրքը պատմում է մի թագավորի մասին, որն իր կյանքում միայն մութն է տեսել: Բայց հետաքրքրասիրության շնորհիվ թագավորը դուրս է գալիս իր խավարից ու բացահայտում լույսը: Սկզբում սարսափելի թվացող լույսը նրա առաջ բացում է մի նոր աշխարհ: Սակայն այստեղ կարևորն այն է, որ թագավորը, գտնելով լույսը, չի կորցնում խավարը: Ուստի հեղինակը ցույց է տալիս, որ աշխարհում կարևոր են երկուսն էլ, որովհետև միայն այդպես կարող ենք հասնել ներդաշնակության: Ինչպես և մյուս երկու գրքերի դեպքում, այստեղ ևս Ալթունյանը մի ոչ սովորական պատմություն է ստեղծել՝ օգտագործելով գույները որպես պատմության մի մաս և նկարազարդողի իր աչքով պատմությունն ու նկարազարդումները հրաշալի ձևով միաձուլել է իրար: Այս թեմայի շուրջ էլ զրուցեցինք գրքի հեղինակի հետ:

ԼԻԼԻԹ ԱԼԹՈՒՆՅԱՆ
Հեղինակ

Լիլիթ, արդյո՞ք բոլորիս մեջ կա այդ խավարի թագավորը:
Կարծում եմ՝ բոլորս էլ ինչ-որ մի իրավիճակում ինչ-որ ժամանակ խավարի թագավոր լինում ենք մեր կյանքում: Մարդ արարածին հատուկ է հարմարավետության տարածքում մնալը և պատասխանատվություն կրող հարցերից փախչելը: Օրինակ, երբ թագավորը կարդում է իր գիրքը, տառերը համարյա թե չեն երևում, բայց ինքն իրեն չի հարցնում, թե ինչու է այդպես: Խավարը նաև պատմության մեջ խորհրդանշում է չիմացությունը: Թագավորը երկար ժամանակ նախընտրում է չիմացության մեջ մնալը՝ վախը հաղթահարելու փոխարեն: Մենք էլ ենք երբեմն այդպես վարվում: Եվ ի վերջո, մենք էլ ենք հոգեկան ճնշվածությունից ֆիզիկապես հիվանդանում, երբ հայտնվում ենք այնպիսի իրավիճակում, որ պիտի քայլ անենք, բայց հետ ենք կանգնում վախից:

Եթե նույն տրամաբանությամբ մշտապես լույս լինի, դա էլ է սխալ, չէ՞:
Ես, իհարկե, այս պատմության մեջ օգտագործել եմ լույսի ու խավարի հարաբերությունը, բայց դա նրա համար է, որ ցույց տամ երկու ծայրահեղություն: Բնականաբար, կարևոր չէ, թե որ մի ծայրահեղության մեջ ենք, կարևորը, որ չմնանք այդտեղ ու ամբողջականության մեջ տեսնենք ներդաշնակությունը:

Իսկ ինչպե՞ս են ստեղծվել նկարազարդումները:
Պատկերագրքի նկարազարդումները նույնքան կարևոր են պատմությունը փոխանցելու մեջ, որքան տեքստը: «Խավարի Թագավորի» մեջ մի քանի հնարքներով այնպես եմ արել, որ գիրքն ավելի ինտերակտիվ լինի, կարծես ընթերցողին ոչ թե պատմում եմ, այլ ցույց եմ տալիս տեղի ունեցածը: Դրանցից ամենասիրվածը սպիտակ էջերով բացվածքն է, որ «պատկերում» է թագավորի աչքերը շլացնող պայծառ լույսը: Այդ բացվածքին հասնելիս բոլորն անխտիր մի պահ շփոթվում են, հետո գլխի ընկնում, իսկ հետո հրճվում:
Պատկերագրքերը հաճախ շատ ավելին են քան գունավոր նկարներն ու մեծ տառերով տեքստերը: Այնտեղ կարելի է գտնել հազարավոր ենթատեքստեր, հղումներ, տրամադրություններ, որոնք գուցե պարզ չլինեն երեխայի համար: Այ ինչպե՞ս հասկանալ կամ ինչպե՞ս մոտեցնել երեխային պատկերագրքին կամ ինչպե՞ս ընտրել: Հենց «Խավարի թագավորը» գրքում բազում դժվարություններ կան, որոնք պետք է հաղթահարել, որ երեխան չվախենա կամ չկոմպլեքսավորվի: Հակառակ դեպքում հնարավոր է մի անհաջող էջի պատճառով երբեք այլևս գիրք չի բացի:

ՄԱՐԻԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Լոգոպեդ

Մարիամ, ինչո՞ւ մտնել գրախանութ ու ընտրել «Խավարի թագավորը»:
Նախ, ծանոթ լինելով Լիլիթ Ալթունյանի նախորդ գրքերին՝ միանգամից ցանկություն է առաջանում ունենալ գիրքը, կարդալ, կարդալ երեխաների համար, միասին քննարկել, վերլուծել, նայել տարբերվող իլյուստրացիաներին, որոնք ևս շատ յուրօրինակ տեսակի են և տարբերվում են մանկական գրականության մյուս գրքերից: Գիրքն ունի հետաքրքիր պատմություն, շատ սահուն կերպով թագավորի վախը հաղթահարվում է, և թագավորը, համարձակ քայլ կատարելով, փոխում է իր աշխարհը, դարձնում ավելի լավը: Նման պատմությունները երեխաներին օգնում են հասկանալ, որ վախենալ պետք չէ, համարձակ պետք է լինել, չվախենալ փոփոխությունից, հաղթահարել սեփական վախերը, և ամեն բան շատ ավելի լավ կլինի:
Բացի այդ, գիրքը հրաշալի տարբերակ է սկսնակ ընթերցողի համար, քանի որ տառատեսակը խոշոր է, գրեթե բոլոր էջերում գրված է սպիտակ հատվածի վրա և այդ հանգամանքը կարևոր է այնքանով, որ շատ ավելի պարզ տեսանելի ու ընթեռնելի են տառերը: Ամեն էջին 3-4 նախադասություն է, երբեմն՝ մի քանի բառ, ինչը ևս կարևոր է սկսնակ ընթերցողի համար, որպեսզի մոտիվացիա ունենա, որ ստացվում է կարդալ, հաջորդ էջ անցնել: Բառապաշարը ծանոթ է տարրական դասարանում սովորող երեխայի համար, չկան նոր և պերճաշուք բառեր, ինչը ևս նպաստում է, որ երեխան կարդա, հասկանա և ցանկանա շարունակել ընթերցելը:

Գիրքն առաջին հերթին ո՞ր տարիքի համար է նախատեսված:
Ըստ իս, գիրքը կարելի է կարդալ 4 տարեկանից բարձր երեխաների համար: Թեպետ միտքն առավել ընկալելի կլինի 6-9 տարեկան երեխաների համար: Կարող են կարդալ և եզրահանգում անել, որպես օրինակ, որպես մոտիվացիա, որպես կյանքի փորձառություն ընդունել: Երբ գիրք եմ կարդում երեխաներիս համար, նրանց չեմ բացատրում իմ ընկալածը, այլ հարցերի միջոցով նրանց ուղղորդում եմ գրքի ասելիքին, լսում նրանց ընկալածն ու մեկնաբանությունը: Շատ հաճախ երեխաներս նկատում են ավելին, քան ես: Ճիշտ չեմ համարում մեր ընկալածն ու եզրահանգումը փաթաթել երեխաների վզին, այլ պետք է թույլ տալ, որ երեխաները երևակայեն, մտքի ճախրանք ապրեն, չէ՞ որ ամեն մեկս մեր ընկալման աշխարհն ունենք, յուրաքանչյուրս յուրովի է ընկալում և վերլուծում: Հետո, պատրաստի տարբերակներ առաջարկելով մենք զրկում ենք երեխաներին ունենալ սեփական կարծիք տարբեր երևույթների մասին:
Այնուամենայնիվ, գիրքն ամբողջությամբ հոգեբանական շերտերի շղթա է: Շատ ծնողներ գուցե կարծեն, որ «Խավարի թագավորը» վախենալու կերպար է, և երեխային պետք է հետ պահել, որպեսզի վախերն ավելի չշատանան: Սակայն գիրքն ունի լրիվ հակառակ ենթատեքստը:

ԻՐԻՆԱ ԽԱՆԱՄԻՐՅԱՆ
Հոգեբան

Ինչ կտա գիրքը երեխային:
Այս պատմությունն ունի մի քանի կարևոր շեշտադրում: Կարևոր մտքերից է երևույթներն իրենց ամբողջականության մեջ ընկալման շեշտադրումը: Որքան էլ լավ լինի որևէ վայրում, որևէ արդեն սովորական դարձած միջավայրում, վստահաբար կան այլ երևույթներ ու վայրեր, որոնք անհրաժեշտ է ճանաչել՝ կյանքն էլ ավելի հարուստ ու զգայական դարձնելու համար: Մյուս կարևոր շեշտադրումը՝ անորոշությունից չվախենալն է: Երբ իրավիճակն անհասկանալի է, անորոշ, անճանաչելի, կարևոր է ունենալ համարձակություն և առաջ գնալ: Երբեմն հենց ամենաանհույս և անորոշ իրավիճակում է գալիս ամենաճիշտ որոշումը, քանի որ ակտիվանում են ամենախորքային ռեսուրսները, որոնք թույլ են տալիս իրականացնել անհնարինը: Կարևոր է լինել համարձակ ու խիզախ: Երրորդ կարևոր շեշտադրումը՝ ներքին ձայնին լսելն է: Երբեմն մենք հասնում ենք մի իրավիճակի և հոգեվիճակի, երբ ամեն բան կոմֆորտ ու հարմար է թվում, երբ ամեն բան սովորական է ու ճանաչելի: Սակայն սա կարող է ուղիղ ճանապարհ լինել դեպի լճացում, ինչը թույլ չի տալիս զարգանալուն, նորը բացահայտելուն, ինքնաճանաչմանը գնալուն: Ուստի, շատ կարևոր է ուշիմ լինել տարբեր «ձայների», որոնք կարող են տանել մեզ դեպի նոր բացահայտումներ և հարստացնել մեր կյանքը:

Ինչպե՞ս թագավորը տեսավ լույսը, հնարավոր է, չէ՞, որ այդպես էլ չտեսներ:
Սովորաբար, երբ կոմֆորտն ու հաճույքը դառնում են սովորական և միապաղաղ, պարտադիր լինում է որևէ ազդակ, որը դրդում է զարգացման ու առաջընթացի: Չափազանց կարևոր է այդ ազդակների ընկալելն ու նկատելը, դրանց կարևորելն ու առաջնահերթություն տալը: Եթե թագավորն այդպես էլ լույսը չտեսներ, նա ուղղակի ընդմիշտ կմնար խավարի մեջ՝ տգիտության խավարի, լճացման խավարի, զարգացումը կանգնեցնող խավարի մեջ: Ուստի վախի հաղթահարումն ու համարձակությունը թույլ տվեցին գնալ առաջ և բացահայտել կյանքի էլ ավելի լայն շերտեր:

Գիրքը, առհասարակ, ինչքանո՞վ կարող է ազդել երեխայի հոգեբանական աշխարհի վրա:
Գրքի դերն ու արժեքը երեխայի կյանքում անգնահատելի են: Գրքի շնորհիվ երեխան բացահայտում է աշխարհը, ճանաչում դրա կառուցվածքը, զարգացնում պատճառահետևանքային և տրամաբանական մտածողությունը, ընդլայնում իր բառապաշարը: Գիրքը թույլ է տալիս զարգացնել երևակայությունը, ակտիվացնում է պատկերավոր մտածողությունը: Գրքի շնորհիվ երեխան սովորում է նույնականանալ տարբեր հերոսների հետ, ինչը թույլ է տալիս ճանաչել մարդու էությունը, նրա ապրումների և վարքաձևի դրդապատճառները, հույզերի խոր աշխարհը: Երեխայի հետ համատեղ ընթերցանությունը նպաստում է մեծահասակ-երեխա հուզական կապի ամրապնդմանը, շփման հմտությունների զարգացմանը: Պատկերավոր գրքերի շնորհիվ երեխան սովորում է համադրել իր լսածն ու տեսածը, զարգացնում է դիտողականությունը, ավելի ամրապնդում լսածը: Վերը նշվածներից զատ՝ գրքի ամենակարևոր գործառույթներից է հաճույք ստանալն ու հետաքրքրասիրության բավարարումը: ■

Երևանի պատմության թանգարան

Արտավարդ Եղիազարյան

Երևան քաղաքի պատմության թանգարան, Հարութ Մալխասյան, wikipedia.org

Ինչով էր հարմար և անհարմար Կապույտ մզկիթը, ինչու չհազողվեց փեղապոխվել Ամիրյանի օրիորդաց գիմնազիայի շենքը և ինչպես կառուցվեց քաղաքապետարանի համալիրի մեզ ներառված մասնաշենքը. Երևան քաղաքի պատմության թանգարանն ինքը դարձել է այդ պատմության մի մասը: Թանգարանի տնօրեն Արմինե Սարգսյանը պատմել է դրա ամենահետաքրքիր էջերի մասին:

Արմինե Սարգսյան

1934 թվականի շոգ հունիսյան մի օր մի սեղանի շուրջ իրար գլխի էին հավաքվել ժամանակի գուցե ամենանշանավոր երևանցիները՝ Ալեքսանդր Թամանյանը, Երվանդ Շահազիզը, Նիկողայոս Բունիաթյանը, Մարտիրոս Սարյանը և ուրիշներ, ընդհանուր առմամբ՝ 13 հոգի: Առիթը՝ Երևանն էր: Ավելի ստույգ՝ Երևանի պատմությունը, որը պետք է ներկայանար վաղուց արդեն սպասվող՝ Կոմունալ Թանգարանի պատերի ներսում: Վերոնշյալ նշանավոր պարոնայք էլ դրա գիտխորհրդի անդամներն էին: Քննարկման գլխավոր թեման՝ Թանգարանի ֆոնդերի համալրումը: Անհրաժեշտ էր կազմակերպել երևանցիների տներում պահվող քաղաքի պատմությանն ու կենցաղին վերաբերող նյութերը: Պետք էր շտապել, քանի որ բացումը հաշված ամիսներից էր նախատեսվում՝ նոյեմբերին 29-ին՝ Հայաստանի խորհրդայնացման հերթական տարեդարձի օրը:

Հաստատությունը, որը հետագայում պետք է վերանվանվեր ու դառնար մեզ ծանոթ՝ Երևան քաղաքի պատմության Թանգարան, ավելի վաղ պետք է բացվեր: Առաջին քննարկումները քաղխորհրդում սկսվել էին դեռ 1928-ին: Թանգարանը պաշտոնապես հիմնադրվում է 1931-ի հունվարի 1-ին: Այն բաղկացած էր երկու հիմնական բաժնից՝ նախախորհրդային և խորհրդային: Սակայն նախքան հանրության համար բացվելը պետք էր համալրել ֆոնդերը: Այն ժամանակ էլ քննարկվել էր տարածքի երկու տարբերակ՝ Նալբանդյան փողոցում գտնվող Ալիխանովի տունը կամ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Ամիրյան փողոցում (որում այդ ժամանակ գործում էր «Անաստված» կինոթատրոնը, իսկ շենքը քանդվեց 1951-ին): Որոշ ժամանակ անց ընտրվում է առաջին տարբերակը, սակայն տեղափոխությունը տեղի չի ունենում: Կեցավայրի այս անորոշությունը դեռ երկար էր հետապնդելու Թանգարանին:



↑ *Կապույտ մզկիթի բակը, 1940-ականներ*

Այսպես, 1931-ին Թանգարանի փոքր անձնակազմի առաջին աշխատավայրը դառնում է Երքաղխորհրդի շենքի մի անկյունը: Որոշ ժամանակ անց՝ Հրշեջ վարչության շենքի երրորդ հարկի մի սենյակը: Տարվա վերջում Թանգարանն արդեն ուներ 408 ցուցանմուշ, որոնք պահվում էին նույն աշխատանքային սենյակում: Ինչպես այդ ամենը ցուցադրել սովորական մարդկանց՝ պարզ չէր: Ի վերջո, 1936-ին Թանգարանը նորից տեղափոխվում է: Նոր կացարանը դառնում է Կապույտ մզկիթը, որի բակում այդ տարիներին սիրում էին թեյ խմել Չարենցը, Մահարին ու շատ ուրիշները: Այստեղ Թանգարանը գործեց 56 տարի, հետո մի քանի տարով մնաց անորոշության մեջ, որպեսզի 2005-ին վերջապես ստանա սեփական տարածքը՝ Երևանի քաղաքապետարանի նորակառույց համալիրի մասնաշենքը:

Տնօրենը՝ պատմական գիտությունների թեկնածու Արմինե Սարգսյանը, Թանգարանի հետ է 1980-ականներից. սեփական աչքերով տեսել է մզկիթում անցկացրած վերջին տարիները, հետո մասնակցել երկու տեղափոխումներին ու վերջապես՝ տնօրենի կարգավիճակով, մտել նոր շենք:

← *Սբ. Հռիփսիմեի անվան օրիորդաց գիմնազիայի շենքը Ամիրյան փողոցում, 1920-ականներ*

Արմինե Սարգսյան

Երևանի պատմության թանգարանի տնօրեն

Դպրոցական տարիքում անթիվ անգամներ եմ եղել Կապույտ մզկիթում, իմ սիրելի վայրերից մեկն էր քաղաքում: Ու երբ ավարտում էի պատմության ֆակուլտետը, մեծ հաճույքով միանգամից այնտեղ կգնայի աշխատելու, բայց քանի որ ազգագրագետ էի, ապա ընդունվեցի Հայաստանի ազգագրության Թանգարան՝ Սարդարապատի հուշահամալիրում: Բայց կյանքն էնպես դասավորվեց, որ 88-ին, ի վերջո, հայտնվեցի Երևանի պատմության Թանգարանում որպես գիտաշխատող:

Մզկիթում երևանցին կարող էր շատ կոլորիտային քաղաքային միջավայրում ծանոթանալ քաղաքի պատմությանը, շոշափել այդ պատմությունը: Իսկ բակը... հրաշալի, ներկայանալի բակ էր, որի շագանակենիների ստվերում մարդիկ երբեմն պարզապես գալիս էին զովանալու ամռան տապից: Հաճախ միջոցառումներ էինք անում այնտեղ՝ Համբարձում, Նավասարդ, Վարդավառ ու այլ տոներ: Թանգարանն այդպիսով ապրող, կենդանի օրգանիզմ էր, որտեղ պատմությունը ոչ միայն ցուցափեղկերի տակ էր, այլ իրապես շնչում էր: Բայց Կապույտ մզկիթի տարածքն արդեն չէր համապատասխանում արդի թանգարանագիտության պահանջներին: Չկար ջերմախոնավային ռեժիմ, տարածքն էր փոքր. 87 հազար ցուցանմուշները վտանգված էին: Ավագ աշխատակիցները պատմում էին, որ նախորդ տարիներին անձրևաջրերն էին պարբերաբար լցվում, նույնիսկ ցուցանմուշներն էին վնասվում:

***

Մի խոսքով, որոշում կայացվեց Թանգարանը տեղափոխել Հռիփսիմյան օրիորդաց գիմնազիայի հրաշալի շենքը Ամիրյան փողոցում: Հատկանշական էր, որ շենքը 19-րդ դարում կառուցվել էր բարեգործական հիմունքներով ու պետք է ծառայեր գիտության, կրթության, մշակույթի նպատակներով: Բացի այդ, այն հին Երևանի մի մասնիկն էր: Եվ ուներ մի սքանչելի բակային տարածք, նույնիսկ ավելի մեծ ու հարմարավետ, քան մզկիթում: Մի խոսքով, Թանգարանի թիմը ոգևորված էր, դա պետք է լիներ մի նոր որակական փոփոխություն մեր աշխատանքում:

Ցուցանմուշները տեղափոխվեցին, բայց ներսում դեռ աշխատանքներ կային անելու: Համենայն դեպս, գործընթացը սկսվել էր... Հանկարծ ամեն ինչ դադարեցվեց. պարզվեց, որ գործարար Վաչե Մանուկյանն է ցանկանում գնել շենքը: Թանգարանը նորից տեղափոխեցին:

→ Կապույտ մզկիթ, Թանգարանի ցուցասրահում. աշխատակիցները հանդիպել են Պարոնի հանդիսարեսի թատրոնի դերասանների հետ

↑ Թանգարանի ցուցասրահում, 1960-ականներ

← Էքսկուրսիա Թանգարանի ցուցասրահում, 1960-ականներ

Աշխատակիցները պայքար ձեռնարկեցին՝ մաքրուհուց մինչև գիտական կազմը, ես էլ գիտաշխատող էի այդ տարիներին: Բայց, ի վերջո, մեզ տեղափոխեցին Մաշտոցի 33ա հասցեում գտնվող շենքը՝ Շահումյանի դպրոցի հետնամասում: Երկհարկանի անհարմարավետ մի կառույց, որ նախկինում որպես գիշերօթիկ դպրոց էր ծառայել: Ամռանը՝ շոգ, ձմռանը՝ սառնամանիք, մանրահատակը՝ կիսաքանդ...

Աշխատակիցները սեփական ձեռքերով փաթեթավորեցին տասնյակ հազարավոր ցուցանմուշները, որպեսզի տեղափոխումն ավելի ապահով լինի: Ցուցադրության մասին խոսք անգամ գնալ չէր կարող՝ տեղ պարզապես չկար: 95 թվականն էր: Հաջորդ հինգ տարիներն այդպես էլ անցկացրեցինք: Թեպետ ակտիվություն փորձում էինք պահպանել, գիտաժողովներ էինք կազմակերպում, դրանց մասնակիցների ու այլ այցելուների համար ամեն դեպքում երկրորդ հարկի միջանցքում կերպարվեստի հավաքածուից նմուշներ էինք ցուցադրում: Իսկ Մեսրոպ Աշճյան սրբազանի աջակցության շնորհիվ կարողացանք վերահրատարակել Երվանդ Շահազիզի հանրահայտ «Հին Երևան» աշխատությունը: Առանց իր նվիրատվության մեր այն ժամանակվա սուղ միջոցներով դա պարզապես երազանք էր մնալու: Գրքի շնորհանդեսի օրը քննարկում էինք նաև Թանգարանի ապագան: Շատ խորհրդանշական էր՝ հաշվի առնելով, որ ինքը՝ Երվանդ Շահազիզը, եղել էր Կոմունալ Թանգարանի գիտխորհրդի կազմում:

***

Համարյա 10 տարի Երևանի պատմության Թանգարանը բաց չի եղել հանրության համար: Երբ 2001-ին ինձ առաջարկեցին դառնալ Թանգարանի տնօրեն, ես խնդիր դրեցի՝ եթե Թանգարանը սեփական շենք չի ունենալու, տնօրենի փոփոխությունը իմաստ չունի: Պետք է նշել, որ քաղաքապետարանից ընդառաջեցին ու որոշում կայացվեց մեզ տարածք հատկացնել «Մետրոպոլ» հյուրանոցի բակում:

→ Թանգարանի կերպարվեստի նմուշներից մեկը

↑ Դպրոցականները թանգարանում, մեր օրեր

Բայց մեր թանգարանի պատմության մեջ դեռ ոչ մի հարց այդքան պարզ ու արագ չի լուծվել: Այս անգամ էլ եղան նոր շրջադարձեր. 2002-ին եղավ նոր որոշում՝ ավարտել քաղաքապետարանի շենքի կառուցումը, որը սկսվել էր դեռ 80-ականներից, ապա կիսատ թողնվել: Դրան զուգահեռ միտք ծագեց միավորել քաղաքապետարանն ու թանգարանն ու մեզ հատկացնել նոր կառուցվող շենքի մասնաշենքը: Սկսվեց ճարտարապետ Ջիմ Թորոսյանի հետ մեր տքնաջան աշխատանքը:

Արդեն կար պատրաստ քաղաքապետարանի շենքի նախագիծը, հետո պետք էր գծել թանգարանինն ու անել այնպես, որ այդ երկուսն իրար հետ համահունչ լինեին: Իմ աշխատանքային օրվա մեծ մասն այն ժամանակ անցնում էր իր արվեստանոցում: Իսկ երբ մասնաշենքի հիմքերն արդեն դրվեցին, վերջապես սկսեցի իսկապես հավատալ, որ ի վերջո կլինի շենքը: Թեպետ, հիշում եմ, խանդով էի նայում նրան, որ քաղաքապետարանի շենքն ավելի արագ է վեր բարձրանում, քան մերը... Լավ է, որ հիմա երկուսն էլ կան:

***

Տեղափոխությունը տառապալից էր: Նորից սկսեցինք փաթեթավորել 87000 ցուցանմուշները, նորից բերեցինք նոր տեղ: Ընդ որում, կան առարկաներ, որոնք հնարավոր էր ներս մտցնել միայն կռունկով՝ երեք հազար տարվա սարկոֆագը, խաչքարեր, Պողոս-Պետրոս եկեղեցու դռները... Իսկ մուտքի մոտ դրված շատրվանը, որ ժամանակին եղել էր սարդարի պալատում, այնուհետև հանձնվել թանգարանին, իրականում պետք է լիներ հիմնական ցուցադրությունում, բայց այնքան ծանր է, որ հնարավոր չէր բարձրացնել վեր՝ ոչ վերելակով, ոչ մարդկային ուժերով: Պարզապես վտանգավոր էր: Ստացվեց, ահա, այցելուներին դիմավորող ցուցանմուշ: Պատվանդանի վրա դնելն էր նույնիսկ խնդիր՝ 12 հոգով, մի կերպ գլանային համակարգով գլորելով բերեցին ներս ու տեղադրեցին պատվանդանին:

2005-ին թանգարանն ամբողջությամբ տեղափոխվեց նոր շենք: Հիմնական ցուցադրությունը նշանակվեց 2007-ին: Շտապողականություն կար, քանի որ սկսում էին խոսակցություններ գնալ, թե ինչու՞ ոչինչ չի անում Երևանի պատմության թանգարանն ու նույնիսկ այլ թանգարաններին միացնելու շշուկներ: Չափազանց բարդ էր, քանի որ երբ որոշումը եղավ, ընդամենը վեց ամիս էր մնացել: Իսկ լուրջ թանգարանները տարիներով են մշակում իրենց հիմնական ցուցադրությունները: Տիտանական աշխատանք կատարեց ամբողջ անձնակազմը:

2007 թվականի ապրիլի 3-ին Երևանի պատմության թանգարանը բացեց իր հիմնական ցուցադրությունը նոր շենքում: Թվում է, թե բացեցինք ու վերջ, բայց իրականում այս աշխատանքն անվերջանալի է: Ցուցանմուշներ են ավելանում, հայեցակարգն է շտկվում: Գումարած դրան, շատ հաճախ կազմակերպում ենք ժամանակավոր թեմատիկ ցուցադրություններ: Արվում է այսպես. հավաքվում ենք գիտական կազմով, ամեն բաժին ներկայացնում է իր առաջարկը, քննարկում ենք և պլանավորում տարվա անելիքները: Բացի այդ, ժամանակավոր ցուցահանդեսների առաջարկություններ են լինում նաև դրսից: Օրինակ, հենց այս օրերին Ալեքսանդր Թամանյանի անվան Ճարտարապետության թանգարանի հետ, քաղաքի օրվան ընդառաջ, համատեղ ցուցադրություն ենք պատրաստում, որում ներկայացնելու ենք մեր հավաքածուի եզակի քարտեզներն ու հատակագծերը:

***

Մարդը պետք է ճանաչի իր քաղաքը: Եթե ճանաչում է, սկսում է սիրել: Եթե սիրում է, սկսում է հոգ տանել, հասկանում է, որ պետք է զարգացնել քաղաքը, առաջ տանել: Ահա այդ առաջին քայլը՝ ճանաչելը, շատերի համար սկսվում է Երևանի պատմության թանգարանից: Դրա համար է, որ կրթական ծրագիր ունենք մշակած դպրոցականների համար: Հենց այդ տարիքում է պետք ամրապնդել կապը սեփական քաղաքի հետ: ■

ԹԱՔՆՎԱԾ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

8 անսպասելի թանգարան, որոնց գոյության մասին հնարավոր է՝ լսած չլինեք, բայց որոնք հաստատ արժանի են այցելության:

Շուշանիկ Փափազյան, Մարգարիտ Միրզոյան
Հարություն Մալխասյան, Բիայնա Մահարի

ԼՈՒՍԻԿ ԱԳՈՒԼԵՑՈՒ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ

Հասցե՝ Մուրացանի 79
Մեծահասակների համար՝ 1000 դրամ, երեխաների համար՝ 500 դրամ
Աշխատում է ամեն օր՝ 12:00-ից 19:00

Թանգարանը սկսել է գործել դեռևս հայտնի ազգագրագետ ու նկարչուհի Լուսիկ Ագուլեցու կենդանության օրոք՝ 2013 թվականից, սակայն այն ժամանակ դա նաև բնակության վայր էր: Այդ պատճառով թանգարանը հյուրեր ընդունում էր միայն նախնական պայմանավորվածությամբ: 2019-ից՝ Լուսիկ Ագուլեցու մահից հետո, ընտանիքը տեղափոխվեց, իսկ տունը դարձավ լիարժեք թանգարան:

Նախկին հյուրասենյակում այցելուներին սպասում են Լուսիկ Ագուլեցու շուրջ 40 տարվա հավաքչական աշխատանքներից շատ ցուցանմուշներ՝ սպասք, կաթսաներ, լամպեր, ձեռագիր մատյաններ, գորգեր, դաշույններ և այլ իրեր: Իսկ յասամանի անուշաբույրը և հյուրասենյակի կահավորանքը հնարավոր են դարձնում պատկերացնել, թե ժամանակին ինչպիսի անցուդարձ է տիրել այս սենյակում:

Ննջարան մուտքն ազդարարում է 17-րդ դարի ֆրանսիական զարդատուփի մեղեդին: Այստեղ կարելի է տեսնել հայկական գոտիների լայն հավաքածու, ազգային տարազի նմուշներով իր զգեստապահարանն ու զարդասեղանը: Հաջորդ սրահում ձեզ կողջունեն հին ռադիոյի ձայնն ու վինիլային ձայնարկչից հնչող ազգային հին երաժշտության ելևէջները, որոնք լցնում են հին ժամացույցների, հեռախոսների և այլ գործիք-ցուցանմուշների սենյակը:

Վերնասրահում ձեզ կսպասեն Աշորայի, Վանատուրի, Ամանորի, Անահիտ աստվածուհու և շատերի փոխակերպված արձանիկ-տիկնիկները, որոնք կպատմեն, թե ինչ տեսք են ունեցել ջրաբեր, անձրևաբեր կամ արևաբեր աստվածությունները և այլ տարբեր կերպարներ: Լուսիկ Ագուլեցին այս տիկնիկների ստեղծման վրա աշխատել է 2012-15 թվականներին՝ ստեղծելով տոնածիսական մշակույթի առանձնահատուկ փոխակերպումներ:

ԿԱՊԻ ԹԱՆԳԱՐԱՆ

Հասցե՝ Ազատության պողոտայի 24/1
Մուտքն՝ անվճար (նախնական գրանցմամբ)

2012-ին նախկին «ԱրմենՏելի» հայտնի շենքում բացված թանգարանն այցելուներին տեղափոխում է հետ՝ այն օրերը, երբ զանգեր հնարավոր էր կատարել միայն հեռախոսավարուհու միջոցով, ով հեշտությամբ կարող էր լսել ձեր խոսակցությունը, երբ մի ամբողջ բազմաբնակարան շենք օգտվում էր միայն մեկ հեռախոսից, երբ հենց այդ նույն հեռախոսը չուներ անջատման կոճակ, իսկ փողոցում տեղադրված հեռախոսին հնարավոր էր խաբել՝ գցելով թելով կապած կոպեկը և խոսակցության ավարտին հետ քաշել: Ի դեպ, թանգարաններում ներկայացված սարքավորումների մեծ մասն աշխատում է, կարելի է զանգահարել սենյակի մի հեռախոսից մյուսին՝ վերարտադրելով տասնամյակներ առաջ եղած հեռախոսային փորձառությունները: «Շարի՛, գալիս եմ»: Մոտավորապես այսպիսի բովանդակություն ուներ հեռավոր 1997 թվականին գրված Հայաստանում երբևէ ուղարկված առաջին էլեկտրոնային տեքստային հաղորդագրությունը: Նամակի հեղինակն այն ժամանակվա Կապի նախարար Գրիգոր Պողպատյանն էր, ով ցանկանում էր շախմատ խաղալ իր ընկերոջ՝ «ԱրմենՏելի» գլխավոր տնօրեն Վահրամ Սողոմոնյանի հետ:
Նման դրվագներ և այլ հետաքրքիր երևույթներ հայոց հեռահաղորդագրական պատմության մեջ շատ են եղել և այդ ամենը պահվում է հենց այդ տիեզերական շենքում գտնվող Կապի թանգարանում: 2012 թվականին բացված թանգարանի նմուշներն այցելուներին տանում են մեկ հարյուրամյակ հետ՝ դեպի 1913 թվական, երբ Ամիրյան փողոցում գտնվող մի հեռագրային գրասենյակի երկրորդ հարկում տեղադրվեց առաջին հեռախոսային կայանը, որը հեռախոսակապ էր տրամադրում շուրջ 200 բաժանորդի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Հասցե՝ Երևանի երկաթուղային կայարանի շենք
Աշխատանքային օրերին սկսած ժամը 09:00-ից:
Մուտքն ազատ է:

Թանգարանը կյանքի է կոչվել 2009-ին՝ իր բովանդակության համար թերևս ամենահարմար վայրում՝ Սասունցի Դավիթ երկաթուղային կայարանում: Սկզբի համար կարելի է ուսումնասիրել բազմաթիվ պատմական լուսանկարները, որտեղ Երևանի կայարանն է՝ տարբեր տարիներին, հատուկ հանդերձանքով մեքենավարները, ժամանակին հայտնի այլ խորհրդային կայարանները և այլն: Հետո անցնում ենք Գյումրու, Վանաձորի և հայաստանյան այլ կայարանների փայտե ֆիգուրների, զինվորական նշանակության, մարդատար և բեռնատար (ձկնափոխադրող) գնացքների կողքով: Ցուցադրության մյուս հատվածներում ներկայիս մանկական երկաթուղու կառուցման պատմությունն է, պատերազմի և Սպիտակի երկրաշարժի հետևանքներն արտացոլող լուսանկարներն են: Բացի փաստաթղթերից ու կադրերից կան նաև տարբեր կայարաններից ու գնացքներից բերված ցուցանակներ, գնացքների մանրակերտեր ու սարքավորումներ: Բայց ամենահետաքրքիրը, իհարկե, հին, արդեն վաղուց կանգ առած վագոններն են, որոնք կարելի է մոտիկից տեսնել:

ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆԻ ԹԱՆԳԱՐԱՆ

Հասցե՝ Նանսենի փողոց 4/4
Մուտքը՝ անվճար

Ֆրիտյոֆ Նանսենն իրապես հռչակավոր մարդ է: Աշխարհում նորվեգացին հայտնի է որպես նշանավոր բևեռախույզ գիտնական, Հայաստանում՝ որպես Մեծ Եղեռնից փրկված հայ փախստականներին առաջին ձեռք մեկնողներից մեկը. 320 հազար հայեր Նանսենյան անձնագրերով քաղաքացիություն ստացան աշխարհի 52 երկրներում, կարողացան օջախներ հիմնել և շարունակել կյանքը, շատերն այդ փաստաթղթերով կարողացան հայրենադարձվել Խորհրդային Հայաստան: Այնպես որ զարմանալի չէ, որ նրա հիշատակը Հայաստանում պահպանվում է ոչ միայն Նանսենի ոսկե հուշամեդալի ու Օղակաձև այգում տեղակայված քանդակի տեսքով: Նոր Նորքի երկրորդ զանգվածում՝ Նանսեի փողոցի Նանսենի անվան այգում, 2014-ին բացվել է Նանսենի թանգարանը:

Երևանի քաղաքապետարանի ենթակայության ներքո գտնվող թանգարանը կառուցվել է բարերարներ, ՀՀ վաստակավոր բժիշկներ Կառլեն և Սառա Եսայանների նախաձեռնությամբ, իսկ նախագծի հեղինակը ճարտարապետ Ալբերտ Սոխիկյանն է:

Թանգարանը փոքր է՝ ընդամենը 40 քմ, բայց կարողանում է ներկայացնել մեծ գիտնականի և մեծ հումանիստի կյանքի գլխավոր ձեռքբերումները՝ հայերեն գրքերի, ֆիլմերի, պաստառների ու այլ նյութերի միջոցով: Դրանցից երևում է, թե որքան ներդաշնակ էր նա կարողանում զուգակցել գիտական ու մարդասիրական գործունեությունը: Թանգարանում առանձին բաժին է հատկացված նաև հովանավորներ Կառլեն և Սառա Եսայանների կյանքին և հայրենասիրական գործունեությանը:

Ի դեպ, Նանսենյան հուշահամալիրը բացի թանգարանից ներառում է նաև Սբ Աստվածածին եկեղեցին, երիցատուն-տաճարը՝ հարակից հանգստյան տաղավարով, և շուրջ երեք տասնյակ հուշարձան, որոնք նվիրված են անվանի հայերին ու հայ ժողովրդի բարեկամներին: Իհարկե, դրանց թվում է նաև Ֆրիտյոֆ Նանսենի քանդակը:

ՌԱԴԻՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԹԱՆԳԱՐԱՆ

Հասցե՝ Արշակունյաց 5
Մուտքն անվճար է

Թանգարանը կյանքի է կոչվել 2013 թվականին՝ Կոմանդոսի՝ Արկադի Տեր-Թադևոսյանի հետ համագործակցությամբ: Ցուցանմուշները հավաքվել են ԴՕՍԱՖ միության Մաշտոց մարզատեխնիկական կազմակերպության նախագահ Ռաֆայել Գրիգորյանի և իր աջակիցների նվիրատվությունների շնորհիվ:

Հավաքածուն ներառում է բազմաթիվ զարմանալի, որոշ դեպքերում՝ մինչև հիմա աշխատող նմուշներ: Օրինակ՝ 1956 թվականի հեռուստացույց՝ ջրով լի ոսպնյակով, նամակներ փոխանցող աղավնիների ուղին կոորդինացնող սարք Հոլանդիայից, «Հրազդան» գործարանի սպիտակ ռադիոն. այդպիսիք ժամանակին կային Երևանի բոլոր տներում՝ առավոտը հնչեցնում էր խորհրդային Հայաստանի օրհներգը, երեկոյան՝ դասական երաժշտություն էր հեռարձակում:

Կապի այլ հաղորդակցության միջոցները վերաբերում են արցախյան և հայրենական պատերազմներին և եթե ձեր բախտը կբերի, ապա դուք կպատկերացնեք, թե ինչպես է աշխատում իսկական ծածկագրեր պատրաստող սարքը՝ մորզեի այբուբենով: Գիծ, կետագիծ, կետ և կրկին գիծ՝ հետախուզական ֆիլմերի պես ու լսվում է իրար հաջորդող մատների տկտկոցը և կարելի է պատկերացնել, թե ինչպիսինն է Խորհրդային Միությունում ինչ-որ մեկի աշխատասենյակում ծրարի մեջ դրված այս ժապավեններով հավաքված ծածկագիրը:



ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԹԱՆԳԱՐԱՆ

Ինժեներական քաղաք, Բագրևանդ

Մուտքն ազատ է

Գիտության և տեխնիկայի թանգարանի հիմնադիրները՝ Ժիրայր Սևոյանն ու Արամ Սալաթյանը, երկար տարիներ զբաղվել են հավաքչական աշխատանքով, ձեռք բերել հայկական արտադրության էլեկտրական ավտոմեքենաշինության, ստուգիչ, չափիչ, ինչպես նաև կենցաղային տեխնիկա, միկրոէլեկտրոնիկա (այլ կերպ ասած՝ այնպիսի բաներ, որ չէինք էլ պատկերացնում, որ արտադրվել են մեզ մոտ), ստեղծել մի ամբողջ հավաքածու և համալրել այդ ամենը ստեղծած և արտադրած գիտնականների և գործարանների մասին լուսանկարներով ու տեքստային նյութերով:

Այսպիսով՝ Երևանում կա թանգարան, ուր կարելի է այցելել ու ծանոթանալ խորհրդային շրջանի ինդուստրիալացման շրջանից մինչև մեր օրերի հայ ժողովրդի գիտատեխնիկական նվաճումներին, գյուտերին, նորարարություններին, գիտական մտքի պատմությանն ու իմանալ, թե ինչ ներդրում են ունեցել հայերը համաշխարհային գիտության ասպարեզում: Միանգամից ասեմ, որ բազմիցս առիթ եք ունենալու հաճելիորեն զարմանալու:

Հավաքածուն բաժանված է երկու հիմնական մասի, որոնք ակնարկվում են թանգարանի անվանման մեջ՝ «տեխնիկան» և «գիտությունը» ցուցադրված են մեկ սրահում: «Տեխնիկան» հատկապես կհետաքրքրի նրանց, ովքեր սիրում են ռետրո իրեր և ջերմ հիշողություններ ունեն խորհրդային արտադրության իրերի հետ կապված՝ «Արագած» սառնարաններից մինչև տեղական արտադրության էլեկտրակիթառներ ու սինթեզատորներ:



ՀՅԴ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Հասցե՝ Միհեր Մկրտչյան 12/1
Մուտքն անվճար է:
Թանգարանն իր դռները բացում է յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 11:00-ից մինչև 16:00:

Իրականում այստեղ ցուցադրված են ոչ միայն Դաշնակցության կուսակցական գործիչների անձնական իրերը, այլ նաև այս ցուցանմուշներից շատերն ամփոփում են Առաջին հանրապետության ստեղծման պատմությունը. Դրոյի անձնական իրերը, Սողոմոն Թեհլերյանի անվանն առնչվող փաստաթղթերը, Առաջին հանրապետության թղթադրամները (հայկական ռուբլիները), Լևոն Շանթի սուրճի գավաթները և այլ օրինակներ:

Այն ամենը, ինչ կարելի է տեսնել այստեղ, հավաքվել և թանգարանի է վերածվել երեք փուլելով: Հավաքչական աշխատանքները սկսվել են դեռևս 19-րդ դարի վերջից՝ ՀՅԴ նշանավոր գործիչ Ռոստոմի խորհրդով՝ հասնելով մինչև 2006 թվական, երբ ցուցանմուշներից շատերը Ֆրանսիայից տեղափոխվել են Երևան: Այսօր թանգարանում շատ ցուցանմուշներ ներկայացված են ժամանակավոր ցուցադրության, քանի որ ցուցատախտակներն անընդհատ թարմացվում են, ինչպես Սողոմոն Թեհլերյանի անձնական լուսանկարներն ու իրերը, որոնք ամեն տարի թանգարանային գիշեր ծրագրի շրջանակներում հայտնվում են թանգարանային մյուս ցուցանմուշների կողքին, այնուհետև պահոցում:

Թանգարանի վերջին հատվածն ընդգրկում է Հայաստանի առաջին հանրապետությանն առնչվող կարևոր դեպքերի ցուցանմուշների ցուցադրությունը: Այս հատվածում կարելի է տեսնել ժամանակին կարևոր նշանակության փաստաթղթեր, Փետրվարյան ապստամբությանն առնչվող լուսանկարներ, տարբեր հասարակական-քաղաքական գործիչների՝ որպես Հայաստանի պատվիրակ աշխատանքային հանդերձանքները, Առաջին հանրապետության դրոշը և այլ շատ նմուշներ: Առաջին հանրապետության պատմությունը կարճ էր, բայց վառ ու կարևոր Հայաստանի համար: Նույն պատճառով էլ կարևոր է այս թանգարանը, որը պետք չէ դիտարկել զուտ կուսակցական տեսանկյունից:

ԵՐԵՎԱՆԻ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Հասցե, Արշակունյաց 44/1 (մուտք 4-րդ), բնակարան 43
Մուտքն անվճար է
Այցելելու համար հարկավոր է նախօրոք պայմանավորվել (հեռ. +374 93 30 92 37):

Մի ամբողջ թանգարան է, բայց տեղավորվում է ընդամենը 65 մ. տարածքի մեջ, որն էլ իր հերթին գտնվում Արշակունյաց պողոտայում: Երեք սենյականոց այս բնակարանում ներկայացված է հավաքորդ Հարություն Մինասյանի շուրջ 30 տարվա հավաքչության արդյունքում ձևավորված անձնական հավաքածուն: Ավելի ստույգ՝ 30 հազար կտոր-ցուցանմուշ՝ հայ և համաշխարհային բժշկության ոլորտից:

Առաջին սենյակ-ցուցասրահը պայմանականորեն ստացել է «նախնադար» անվանումը: Այս հատվածում ներկայացված են պեղածո-հնագիտական նմուշներ, բժշկական անդամահատման գործիքներ, կմախքներ, քարեդարյան գործիքներ, սպասք, գուռ, առողջարանային ջրեր ընդունելու հարմարանքներ և այլ իրեր: Պարոն Մինասյանը հպարտությամբ ներկայացնում է 5000 տարվա վաղեմություն ունեցող գանգոսկրի ախտաբանությամբ մարդկային գանգը՝ գտնված Արտաշատի Ջրահովիտ գյուղի պեղումներից մեկի ժամանակ: Ընդ որում, այն պեղել է ինքը՝ պարոն Մինասյանը: Թանգարանի այս մասում կարելի է պատկերացում կազմել, թե ինչպես է զարգացել բժշկության պատմությունը, երբ պարոն Մինասյանը ձեզ պատմի, թե ինչպես են հնում օգտագործվել անդամահատման գործիքները կամ իրականացվել է ներքին օրգանների հետազոտություն:

Հյուրասենյակի տարբեր անկյուններում հնարավոր է տեսնել իսկական բժշկական գրասեղաններ, կոկիկ դասավորությամբ բժշկական կանացի և տղամարդու պայուսակներ, հանդերձանք, ժամանակին հայտնի հայ և օտարազգի բժիշկների, բժշկական համալսարանի ուսանողների և այլոց լուսանկարներ, անձնական իրեր, որոնք թանգարանին նվիրաբերվել են ժառանգների կողմից կամ գնվել են հավաքորդի անձնական միջոցներով:

Դեպի պատշգամբ տանող ճանապարհին ձեզ կհանդիպեն 18-20-րդ դարերում օգտագործված անվանական ցուցատախտակներ, որոնք ազդարարում էին այս կամ այն բժշկի բնակարանի հասցեն, ինչպես նաև տարբեր ժամանակների կենցաղային իրեր՝ ինքնաեռներ, երկաթյա արդուկներ և այլն, որոնք օգտագործվել են բժշկական նպատակներով, գուցե հենց նույն բժիշկների, որոնց ցուցանակները նույնպես այստեղ են: ■



ՎԻՇԱՊՈՒԲԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ



Նոր հայկական ֆենթըզի վեպ՝ մեր կողքին ապրող վաղնջական առասպելական էակների մասին

Երևանի բոլոր գրախանութներում

գինը՝ 4990 դրամ

«ԲԱ ԱՅՍ ԱՄԵՆԻ ՎԵՐՋԸ ԻՆՉ Է ԼԻՆԵԼՈՒ». ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ՀՆԱԲՆԱԿՆԵՐԸ

Էլեն Բաբալյան
Հարություն Մալխասյան

ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կազմակերպական վարչության պետ
Քաղաքապետարանում է 1993-ից

Արմինե Վարդանյանի սենյակը քաղաքապետարանի բոլոր սերունդների աշխատակիցների շրջանում հայտնի է որպես դիվանագիտական կորպուս: Նրա սենյակի պատերն այնքան բանակցություններ են տեսել, որ եթե մի օր պատմվեն, մի ամբողջ հատոր կհավաքվի (ու հաստատ կդառնա բեսթսելեր):

Ամեն ինչ սկսվեց երեք տասնամյակ առաջ: 1993-ին Արմինե Վարդանյանն արդեն ուներ երեք երեխա, ամուսին, սկեսուր ու սկեսայր: Բայց նորանկախ երկիրն աշխատող կադրերի կարիք ուներ, և նա ընդունվեց աշխատանքի Երևանի քաղխորհուրդ: Քաղաքապետը ներկայիս նախագահն էր՝ Վահագն Խաչատուրյանը: Ընդունարանում էր, առաջին կարգի մասնագետ, աշխատավարձը կազմում էր 14 հազար դրամ: Որպես բոնուս կտրոն էին տալիս՝ օրական երկու հարյուր դրամի չափ, որը հերիքում էր բուֆետից օգտվելու համար: Ավտոբուս էլ ունեին:

Մնում էր նստել ու աշխատել: Պատմում է, որ այն ժամանակ գրությունները զգալիորեն ավելի քիչ էին, ներկայիս քանակի մոտ երեսուն տոկոսը: Սխալ կազմած գրություններ շատ կային, թեև հիմա էլ քիչ չեն: Տարիների ընթացքում առավել համբերատար է դարձել, երկար շփվում է մարդկանց հետ, բացատրում պետական համակարգում գործող ընթացակարգը: Քայլ առ քայլ մասնագիտական աճ ապրելով հիմա արդեն լիազորված է Երևանի քաղաքապետի անունից զբաղվել հավաքների, միջոցառումների հաստատմամբ կամ մերժմամբ:

«Քաղաքացիների հետ աշխատանքը շատ նուրբ, պատասխանատու գործ է: Օրինակ, մի անգամ մեկը նամակ էր գրել՝ խնդրելով իրեն տալ պատվավոր քաղաքացու կոչում: Իհարկե, երկար հիմնավորել էր: Կանչեցինք, բացատրեցինք, որ պատվավոր կոչումները քաղաքապետի առաջարկով հաստատում է ավագանին, հատուկ նախագծով, որպես կանոն «Էրեբունի-Երևան» տոնակատարությանն ընդառաջ»,– պատմում է տիկին Վարդանյանն ու, սեղանից վերցնելով մի սրբապատկեր, հիշում. «Մի տարեց ուսուցչուհի շաբաթական երեք անգամ զանգում էր ու խնդրում որևէ փողոց անվանակոչել Սահակ Պարթևի անունով: Հասկացանք, որ կինը լուրջ է տրամադրված, ինքներս նախաձեռնեցինք գործընթաց, կազմեցինք նախագիծ, դիմեցինք ավագանուն: Հաստատվեց: Շատ չանցած այդ կինը ինձ մի ծրար ուղարկեց, վախվորած բացեցի, ներսում Սահակ Պարթևի սրբապատկերներ էին: Մինչ օրս պահում եմ»:

Այս տարիների ընթացքում տիկին Վարդանյանը յուրացրել է ամենակարևորը՝ մերժել միայն անհնարինության դեպքում, և այն էլ՝ գրագետ ու սիրալիր:

ԳՈՇ ՍԱՐԳՍՅԱՆ

Մշակույթի և տուրիզմի վարչության պետ

Քաղաքապետարանում է 2007-ից

Մասնագիտությամբ ռեժիսորը նոր էր ավարտել ասպիրանտուրան, սկսել մանկավարժական գործունեությունն ու զուգահեռ տարբեր սոցիալ-մշակութային համատեղ ծրագրեր էր իրականացնում քաղաքապետարանի հետ, երբ հրավիրեցին մշտական աշխատանքի Երևանի քաղաքապետարանում: Պատմում է, որ պատկերացում չուներ՝ ուր է գալիս ու ինչ վարչական աշխատանք է սպասվում: Բայց արագ ինտեգրվեց. «Իրականում երբեք սահմանափակում չեմ ունեցել, ազատ եմ եղել իմ ստեղծագործական աշխատանքի մեջ, միշտ իրականացրել եմ բեմադրություններ, համերգներ, ընդ որում՝ ոչ միայն Հայաստանում, այլև ԱՄՆ-ում: Տարբեր ժամանցային ծրագրեր ենք ունեցել, վերջին տարիների ծրագրերը հատկապես էական փոփոխություն մտցրեցին քաղաքի մշակութային կյանքում: Երևանի քաղաքապետարանը նոր հանձնառությամբ դիմեց համարձակ քայլի և փոխեց մշակութային քաղաքականության ուղղությունը»:

Այս գործում առաջին քայլը Թումանյանի անվան զբոսայգում բալետային երեկոներ կազմակերպելն էր, քանի որ մինչ այդ որևէ մեկը պատկերացում անգամ չուներ՝ ինչպիսի ընդունելության կարժանանա այդ նախաձեռնությունը: Գլոբալ բովանդակային ռիսկի արդյունքում Երևանն ունեցավ երեք շրջադարձային մշակութային օրեր՝ տարածաշրջանում առաջին անգամ բալետային ներկայացումները բացօթյա ձևաչափով էին կազմակերպել: Ելնելով հազարավոր դիտումներից, ներկա գտնված ավելի քան 35 հազար երևանցիների ու քաղաքի հյուրերի արձագանքներից՝ որոշվեց ավանդական դարձնել բացօթյա ներկայացումները, որի արդյունքում սեպտեմբերին Թումանյանի անվան այգում իրականացվեց «Օպերա բաց երկնքի տակ» մեգանախագիծը: «Այս տարիների ընթացքում տարբեր միջոցառումներ եմ տեսել, ինքս կազմակերպել, բայց սա լավագույնն էր, ինչ արել ենք՝ իմ խորին համոզմամբ»:

Քաղաքի մշակութային կյանքում մթնոլորտ փոխած Մշակույթի վարչության պետը, որն իր կարիերան քաղաքապետարանում սկսել է առաջին կարգի մասնագետի հաստիքից, հիշում է, որ եղել են օրեր, երբ ուզեցել է հեռանալ, ավարտել ու փակել կյանքի այս փուլը. «Մտածել եմ, որ ինձ սպառել եմ, արդեն ժամանակն է հեռանալու, բայց ամեն անգամ ինչ-որ բան ինձ հետ է պահել: Ես հաճախ եմ ինձ հարց տալիս՝ օգնո՞ւմ եմ, թե օգտվում: Եվ այդ հարցադրումը պետական համակարգում աշխատող յուրաքանչյուր մարդու համար ամենաէականն է: Պետական համակարգում ներգրավված մարդը, իմ խորին համոզմամբ, պետք է առաջնորդվի օգտակար լինելու գաղափարով: Անձամբ ես այստեղ եմ միայն հանուն Երևանի»:

Երևանի ենթակայությամբ գործում են 72 մշակութային կազմակերպություններ, որոնց շահառուները տասնյակ հազարավոր քաղաքացիներ են իրենց տարաբնույթ պահանջներով և հարցերով: Լինում են նաև խրթին շփումներ. «Մեր երաժշտական դպրոցներից մեկում աշխատած մի կին արխիվներում չէր կարողանում գտնել իր աշխատանքի տարիների մասին վկայող փաստաթղթերը: Տարեթվերը խախտված էին, ինչի արդյունքում նրա կենսաթոշակը սխալ էր հաշվարկված: Ու թեև մեր գործառույթի հետ այդքան էլ չէր առնչվում այդ հարցը, բայց շուրջ երեք ամսվա աշխատանքների արդյունքում կարողացանք օգտակար լինել նրան»:

Սարգսյանը վարչության աշխատանքի նպատակն է համարում պետության և համայնքի շահերը պաշտպանելով՝ երևանցիներին օգտակար լինելն ու քաղաքի մշակութային կյանքի բնականոն զարգացումն ապահովելը: «Մեր կարևորագույն խնդիրն է ավելի մոտ լինել մարդուն, մեր աշխատանքի արդյունքում ամեն անգամ մեկ քայլ ավելի մոտենանք երևանցուն և արժանի լինենք Երևանին»:

ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Զանգերի սպասարկման և աջակցման բաժնի պետ

Քաղաքապետարանում է 2005-ից

Նոր էր ավարտել ԵՊՀ ռոմանագերմանական ֆակուլտետը, երբ աշխատանքի անցավ քաղաքապետարանի իրավաբանական վարչության ընդունարանում: Զբաղվում էր թղթաշրջանառությամբ, ծանրաբեռնված էին դատական գործերով, ծանր տարիներ էին:

Վստահ է, որ ամենասկզբում թուղթը ճանաչելը, թղթի հետ աշխատելը շատ կարևոր է, այն լավագույն հիմքն է, հիմա արդեն հեռվից հեռու թղթի տեսքից միայն հասկանում է՝ ինչի մասին է գործը: Նրա ղեկավարման ներքո գործող բաժինը, որը հանրության շրջանում դեռևս հայտնի է որպես «թեժ գիծ», իրականում զբաղվում է ոչ միայն բողոքներով, այլև ընդունում առաջարկություններ: Տարաբնույթ: Հաճախ՝ զավեշտալի:

Վերջերս հիմնադրված եռալեզու սպասարկման հետ կապված մի դեպք պատմեց. «Բնակիչներից մեկը՝ մի տարեց կին, զանգել էր ու, լսելով, որ ունենք նաև ռուսերենով սպասարկում, սեղմել ու միացել ռուսերեն լեզվով սպասարկող մասնագետին: Մի կերպ բառեր հայթայթելուց ու խնդիրը բացատրելուց հետո մասնագետը գլխի էր ընկել, որ կինը հայախոս է և հարցրել՝ ինչու է ընտրել այս տարբերակը, չէ՞ որ կար նաև հայերենը: Կինը տվել էր ապշեցուցիչ պատասխան՝ ռուսերեն լինի, որ խնդիրս շուտ լուծվի: Անցանք հայերենին, լուծեցինք խնդիրը»:

Ընդհանրապես, դեպքերն այս բաժնում մեկը մեկից արտառոց են. ամռանը, երբ ամբողջ քաղաքում ջրի խնդիր կար, մի կին էր զանգահարել, աղաչում էր օգնել, ջուրը միացնել, որ ծիրանները չփչանան, ջեմ էր սարքում: Վերջերս մի տղամարդ էր զանգել և ասել, որ կինը հղի է, ում մոտ խորհուրդ կտան տանել կոնսուլտացիայի: Լինում են նաև ահազանգեր, օրինակ, գերեզմանոցից: Տղամարդը խնդրում էր արագ գալ, հասնել, հենց այդ պահին հողատարածքը վաճառում են ու նա չի կարողանում իր գերեզմանաքարերը հանել-տանել: Աննան պատմում է, որ հաճախ խոսում են ագրեսիվ, կոպիտ, վրդովված, բայց իրենք լսում են համբերատար, ու վերջում արժանանում ներողության և շնորհակալության:

Շատ հաճախ միանգամից ինքն է ընդունում զանգն ու սկսում վարել երկար բանակցություններ: «Մի կին կար, շատ գրագետ էր, իրավաբան, երբ խնդրեցի հստակ ներկայացնել խնդիրը, ասաց՝ ինքը խնդիր չունի, զանգել է զրուցելու: Բայց խնդիր, իհարկե, կար, մեզ լավ լուրով չեն զանգում: Մի ժամ խոսելուց հետո ավտոմատ անջատվեց զանգը, արդեն ես զանգեցի, էլի երկար զրուցեցինք, վերջում հասկացա, որ կինն անդամահատված է, ապրում է միայնակ բարձրահարկ շենքի վերևի հարկում, ու ուղղակի ուզում էր նստել վերելակ, իջնել բակ, մաքուր օդ շնչել, մարդկանց հետ շփվել: Մենք ընկերացանք, փոխանցեցի իմ անձնական հեռախոսահամարը, խոստացա՝ ժամը վեցից հետո միշտ զրուցել, երբ իմ կարիքը զգա»:

Նրա աշխատանքում կարևոր գործոն է մերժման փաստարկված լինելը: «Հստակ պատասխան ենք տալիս, ոչ թե լղոզված բացատրություն, և դա մեզ համար կարևոր ձեռքբերում է»:

Զանգերի սպասարկման բաժնում պրակտիկանտները երկար չեն դիմանում, ճնշումները շատ են, ագրեսիան մեծ է, պետք է դիմակայել, չմոռանալ ժպտալ ու լինել բարեհամբույր: Այս բաժինն անմիջական կապ ունի քաղաքի մթնոլորտի հետ: Պատմում է, որ հիմա էլ զանգում են քաղաքական հարցերով՝ ինչ է սպասվում մեզ, բա այս ամենի վերջը ինչ է լինելու: Ի դեպ, լինում են զանգեր նաև Ադրբեջանից, փորձում են հոգեբանական ճնշում կիրառել: Էլ չգիտեն, որ թեժ գծի աշխատակիցներն արդեն այնքան են թրծվել երևանցիների բողոքներն ու աշխարհաքաղաքական հարցերը քննարկելով, որ այլևս ոչնչից չեն վախենում:

ԷՎԵԼԻՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Առաջին բաժնի պետ

Քաղաքապետարանում է 1980-ից

Ինժեներ-տեխնոլոգ Էվելինան դասավանդում էր Երևանի սննդի արդյունաբերության տեխնիկումում, երբ կյանքը նրան բերեց Երևանի քաղաքապետարան և այլևս բաց չթողեց: Քաղաքապետարանը կոչվում էր Քաղխորհրդի գործկոմ, բաժինը՝ կազմակերպական, բայց ուներ վերահսկողական ֆունկցիաներ: Ստուգում էին բոլոր-բոլոր ստորաբաժանումները, ընդհուպ գերատեսչության աշխատանքային կարգապահությունը: Սկզբում տեսուչ էր, հետո հրահանգիչ: Ստանում էր 160 ռուբլի աշխատավարձ, ինչը շատ բարձր էր այդ տարիների համար:

Բաժինը բազմաթիվ անգամներ է լուծարվել, քսան հոգով էին աշխատում, հետո՝ չորս հոգով, բայց աշխատանքի ծավալները տարիներին զուգահեռ միայն ավելացել են. «Դուռը բացել են, ասել՝ սա է քո նոր աշխատանքը, դե գնա ու հասկացի՝ ոնց է պետք աշխատել: Այդ պատճառով մենք տարիների ընթացքում դարձել ենք շվեյցարական դանակի նման՝ ամեն ինչ կարողանում ենք անել, օրինակ, մեր կազմակերպական բաժնի յուրաքանչյուր աշխատող կարող էր հեշտությամբ դառնալ կրթության բաժնի աշխատակից: Ընդմիջման դուրս չէի գալիս, մի հատ բրդուճ էի անում ու համ թղթերը ստուգում, համ ուտում: Ժամանակ չկար»:

Բոլոր-բոլորին ստուգել ու վերահսկելը բնավ հեշտ աշխատանք չի, հարցնում եմ՝ չէի՞ք վախենում ձեր կարման փչացնել: Ժպտում է. «Պատժամիջոցները երբեք էլ իմ ձեռքում չեն եղել, դրանով զբաղվում էր ղեկավարությունը: Իմ կարման մաքուր է»: Շարունակում եմ հետաքրքրվել՝ իսկ ինքնուրույն որոշումներ կայացնելու ազատություն, այնուամենայնիվ եղե՞լ է: «90-ականներին հրահանգել էին գրեթե ամբողջ արխիվը վառել, որովհետև ոչ մեկին պետք չէր: Մենք մի քանի աշխատակիցներով բառիս բուն իմաստով փաթաթվեցինք մեր մատյաններին, ներքին կարգով պայմանավորվեցինք, որ թույլ չենք տալու վառել արխիվը: Բարեբախտաբար, հաջողվեց, ու հիմա երբևէ որևէ մեկին մակագրված բոլոր թղթերի ժուռնալները կան»:

Քաղխորհրդի գործկոմից ի վեր շատ ջրեր են հոսել, համակարգը փոխվել է, բայց աշխատանքի բնույթը նույնն է մնացել. առաջվա պես եթե գաղտնի մակագրությամբ որևէ թուղթ հայտնվի երրորդ անձի ձեռքերում, դա կլինի մեծ խնդիր տիկին Մարտիրոսյանի համար: Առաջվա պես ամեն մի թղթի համար սրտացավ է, երբեք անտարբեր չի ամսաթվերի, վերջնաժամկետների նկատմամբ, առաջվա պես անձամբ է զանգում աշխատակցին, որ թույլ չտա՝ կատարման ժամկետները խախտվեն:

Հարցազրույցի ընթացքում անընդհատ ստուգում էր Մալբրի համակարգը, տեսնի՝ միգուցե նոր նամակ եկավ: «Մեր լիազոր մարմինը Ազգային անվտանգությունն է: Մյուս գերատեսչությունների Առաջին բաժինների հետ մշտապես առնչվում ենք»: Ասում եմ՝ «Դուք փակ ակումբ էլ կունենաք»: Ժպտում է. «Ակումբ չունենք, բայց հավաքներ լինում են: Կառավարությունում քննարկումների ժամանակ գալիս են նույնիսկ մարզերի Առաջին բաժինների ղեկավարները: Դե, մինչև ծանոթանալը նրանց ուղարկած թղթերից արդեն իմացել եմ՝ ով է պրոֆեսիոնալ»:

Քաղաքապետարանի նոր աշխատակիցներից գոհ է, ասում է՝ գրագետ են, բայց մի խնդիր կա, քչերն են ստանձնում պատասխանատվություն, կատարող են, ոչ թե որոշում կայացնող: Դժվար է վիճել, տիկին Մարտիրոսյանն ամեն ինչ գիտի, չէ՞ որ նա Առաջին բաժնից է:

ԳԵՂԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ տնօրեն

Քաղաքապետարանում է 1996-ից

Ամեն ինչ կազմակերպելու, վերահսկելու և դասակարգելու մեծ սիրահար Գեղամը Երևանի քաղաքապետարանում հայտնվեց պատահաբար, բայց երկու շաբաթ փորձաշրջանը բավարար էր, որպեսզի երևան գային նրա կարողությունները: Սկսեց ամենաառաջին հաստիքից՝ տնտեսական բաժնի ավագ մասնագետ: Սկզբում հին վարչական շենքում էին, 2004-ին տեղափոխվեցին նոր շենք ու այդժամ սկսվեց իսկական փորձաշրջանը: Արդեն նշանակվել էր շենքի պարետ, իսկ դա ենթադրում էր, որ նրա ուսերին էր դատարկ շենքի ամբողջական կահավորումը: «Ամբողջ գույքը ես եմ տեղաբաշխել, գույքագրել՝ որ աշխատակիցն ինչի կարիք ունի, որ սենյակում ինչ լինի»,– ծանր փուլի մասին խոսելիս ավելացնում է. «Ես բնույթով անհանգիստ մարդ եմ, անընդհատ շարժման մեջ եմ, ու իրականում ինձ համար գերագույն հաճույք է ամբողջ օրը շրջել տարածքով մեկ ու իմ աչքով գնահատել կարիքները»:
Նրա ենթակայության տակ գտնվող քաղաքապետարանի երկու մասնաշենքերը մշտապես փայլում են մաքրությունից, փոշին այստեղ անձնական թշնամի է: «Խիստ հսկողություն եմ սահմանել, պետք է կատարյալ մաքուր լինի: Իմ աշխատակիցների համար օրինակ եմ ծառայում, լուսադեմին եմ գալիս աշխատանքի, շաբաթ-կիրակի ջինսով ու բոթասներով ջրի ցնցուղը ձեռքս տղաների հետ հանում-լվանում ենք խալիները, հինգերորդ հարկից սկսած հատ-հատ մաքրում ենք ծաղիկների ամեն մի տերևը»:
Ընդհանրապես, բույսերի ու Խաչատրյանի սերը առանձին պատմություն է: Առնվազն 18 տարի է՝ քաղաքապետարանի շենքի ներսում իսկական ջերմոց է՝ էկզոտիկ բույսերով, մշտադալար կանաչով: Ապակե տանիքով ջերմոցային պայմաններում բույսերը դժվարությամբ են աճում, Գեղամն անձամբ գիտի ամեն բույսի խնդիրներն ու ծաղկելու ժամանակաշրջանը: «Ծաղիկներ ունենք, որ գիշերն են բացվում, ու այնպիսի անուշ հոտ են տարածում շենքով մեկ: Այդ մասին գիտենք միայն մինչև երեկոյան 10-11-ը աշխատողներս»: Այս վարչական շենքն առանց ծաղիկների այլ մթնոլորտ կունենար, կանաչն ամբողջովին փոխում է ներսում գտնվողի հոգեվիճակը:
Ամեն օր վաղ առավոտյան, երբ դեռ չի սկսվել աշխատանքային թոհուբոհը, Գեղամն իր բոլոր աշխատակիցների հետ դաշնամուրի կողքին ժողով է անում, ամեն ոք ստանում է օրվա հանձնարարականը: «Ես ուղղակի շատ զգոն հետևում եմ, որ միշտ ամեն ինչ կարգին լինի: Բանալիների տրցակի ձայնը հենց լսում են մաքրուհիները, արդեն գիտեն, որ ես տարածքում եմ, բոլորը զգաստանում են: Իսկ ես միշտ տարածքում եմ»:
Այսքան տարի նույն վայրում կյանքն անցկացրած աշխատակիցը նկատում է, որ նախկինում մարդիկ ավելի լուրջ տեսք ունեին այս շենք մտնելիս, ավելի ձիգ էին, զուսպ, պարտադիր գոնե պիջակներով: Հիմա ավելի թեթև, ազատ հագուստ են կրում, իրենց թույլ են տալիս ժպտալ և կատակներ անել: «Կյանքը ցույց տվեց, որ իրական աշխատանքը կապ չունի լուրջ արտաքինի հետ: Հիմա շենքի ներսում այն կատարյալ կարգուկանոնն է, որին միշտ երազել եմ հասնել: Օրինակ, ես ողջ կյանք պայքարել եմ շենքի ներսում ծխողների դեմ ու հիմա վերջապես հասել արդյունքի. ներսում էլ չեն ծխում»:
Գեղամ Խաչատրյանը քաղաքապետարանի այցեքարտի պահապանն է, երևանցին ներս մտնելով առաջին հերթին, թեկուզև ենթագիտակցաբար, գնահատում է նրա աշխատանքը, հետո անցնում վարչություններին: Հարցնում եմ՝ միթե չկա մի անկյուն, որը մի քիչ անտեսված է, չնկատված, Խաչատրյանը միանգամից վրդովվում է. «Օրվա ցանկացած ժամին գնանք քաղաքապետարանի բարձրադիր աշտարակն ու սպիտակ վերնաշապիկով հենվեք դրսի պատշգամբին, կտեսնեք, որ փոշու դեմ պատերազմում մենք հաղթանակել ենք»:

ԱՆԱՀԻՏ ԱՄԻՐՅԱՆ
Երևանի պատմության թանգարանի գլխավոր ավանդապահ
Թանգարանում է 1985-ից

Համալսարանի պատմության ֆակուլտետն ավարտելուց հետո նրան ընտրեցին ու հրավիրեցին աշխատանքի Երևանի պատմության թանգարան: Եկավ ու մնաց: Այն տարիներին թանգարանը գործում էր Կապույտ մզկիթի շենքում, բայց հայկական կառավարությունը որոշեց, որ դա հարիր չէ Երևան քաղաքին ու տրամադրեց Ամիրյան 6 հասցեում գտնվող Հռիփսիմյան գիմնազիայի շենքը: Հոյակապ մի շենք, որտեղ 1993-ին սկսեցին տեղափոխել թանգարանի ցուցանմուշները, որոնք քիչ չէին՝ առավել քան 90 հազար առարկա: Բայց երջանկությունը կարճ տևեց ու 1995-ին շենքը վաճառեցին: Ստիպված էին էլի տեղափոխվել, այս անգամ՝ ժամանակավոր հատկացված Շահումյանի անվան դպրոցի մասնաշենք:
«Մոտ քսան աշխատակիցներով այդ բոլոր ցուցանմուշները գրկած մի տեղից մյուսն էինք տեղափոխվում»,– հիշում է տիկին Ամիրյանը: Հետո սկսեցին կառուցել քաղաքապետարանի ներկայիս շենքը: Թանգարանի համար առանձնացվեց կից կառույց, գլխավոր ֆոնդապահը, թանգարանի տնօրենը, փոխտնօրենը ճարտարապետ Ջիմ Թորոսյանի հետ ամբողջ օրը շինհրապարակում էին: 2004-ին արդեն հիմնադրվեցին այս շենքում: Ու թեև այս տարիների ընթացքում արդեն հարմարվել են, սակայն շենքի պայմաններն այդքան էլ չեն գոհացնում գլխավոր ավանդապահին, օրինակ՝ 98 հազարից ցուցադրված են ընդամենը 1600 նմուշները. «Մեր հարուստ ֆոնդը ստիպված ենք փակի տակ պահել, հարմար ցուցատարածք չունենք: Շատ մտահոգ եմ, ուզում եմ տեսնել այդ հարցի լուծումը»: Գլխավոր ավանդապահը վստահ է, որ թանգարանին ավելի հարմար կլիներ Ամիրյան 6-ի շենքը:
Տիկին Ամիրյանը պատմում է, որ ժամանակին գլխավոր ավանդապահը պաշտոնաթող փոխգնդապետ էր, և նրա ստեղծած համակարգն այնքան ճշգրիտ էր, որ մինչ օրս ֆոնդն օրինակելի է այլ թանգարանների համար՝ կատարյալ դասակարգված, զինվորական ճշտապահությամբ: Ութ ֆոնդերից յուրաքանչյուրն ունի ստորաբաժանումներ, և դրանցից յուրաքանչյուրի պահպանությունը պետք է ճիշտ կազմակերպվի: «Տարբեր ջերմային, լուսային ռեժիմներ են պահանջվում, չոր պայմաններում մետաղներն են, կահույքն այլ ջերմաստիճան է սիրում, կերպարվեստն ավելի քմահաճ է: Ամեն մեկի համար պարտավոր ենք ապահովել կյանքի բարվոք պայմաններ»:
Երբ հարցնում են՝ որ ֆոնդն է ամենաարժեքավորը, արագ, առանց երկմտելու թվում է. «Կերպարվեստի ֆոնդը, ազգագրության ֆոնդը, հնագիտության, դրամագիտության...»: Եվ այդպես ութ ֆոնդն էլ հերթով թվարկվում են: Նրա համար բոլորն են ամենաարժեքավորը, ու Երևանի պատմության թանգարանը ստեղծած Եղիշե Չարենցը, Մարտիրոս Սարյանը հաստատ գոհ կժպտային այս պահին: ■

Քաղաքական դեկորացիաներ. Խճանկարի արվեստը Երևանի քաղաքային միջավայրում

Վիգեն Գալստյան

Արվեստաբան Վիգեն Գալստյանը պատմում է քաղաքային խճանկարների մշակույթի մասին ու հուշում երևանյան հինգ հրաշալի նմուշ, որոնց այսօր դեռ կարելի է մոտենալ ու զննել սեփական աչքերով:

Վիգեն Գալստյան
Հարություն Մալխասյան

Խորհրդահայ մոնումենտալ արվեստի ժառանգության, այդ թվում նաև խճանկարների վերաբերյալ «ՄանԲան» տեսողական մշակույթի արխիվի կողմից այժմ պատրաստվում է նոր, ծավալուն պատկերագիրք, որը լույս կտեսնի հաջորդ տարի: Իսկ մինչ այդ դրանց որոշ օրինակներ կարող եք գտնել արխիվի առաջին հրատարակության՝ 2022-ին լույս տեսած «Արդիության պահ. Խորհրդահայ ճարտարապետությունը 1960-1980-ականներին» պատկերագրքում:

1950-ականների վերջին խրուշչովյան քաղաքական «ձնհալը» առիթ հանդիսացավ խորհրդային մշակույթի ու արվեստի որոշակի հեղաշրջմանն ու ազատականացմանը: Արմատականորեն փոխվեցին քաղաքաշինական ու ճարտարապետական նորմերն ու մոտեցումները, որոնք վերադարձան մոդեռնիստական մտածողության հիմունքներին՝ ռացիոնալիզմին, մոդուլարությանը, ձևերի վերացականությանն ու մաքրությանը: Ֆունկցիոնալիստական ու կառուցողական այդ գաղափարները, սակայն, չէին կարող բավարարել «ազգային ինքնության» դրսևորման ձգտող ժամանակակից քաղաքների, հատկապես մայրաքաղաքների պահանջներին: Երևանը բացառություն չէր այդ առումով, ուստի 1960-ականների սկզբին քաղաքում սկսեցին ի հայտ գալ ուրբանիստական նոր լուծումներ, որտեղ կարևոր տեղ էր հատկացված հանրային միջավայրի ու հատկապես շենքերի արտաքին ու ներքին գեղագիտական ձևավորմանը:

Հենց այդ տասնամյակում էլ Երևանում սկսեցին հայտնվել մոնումենտալ արվեստի լայնածավալ նախագծեր՝ խճանկարներ, որմնանկարներ ու կերամիկական բարձրաքանդակներ: Խճանկարը, մասնավորապես, չափազանց կարևոր է դառնում որպես բաց տարածությունների, մոդեռնիստական շենքերի լայն, դատարկ մակերեսների հարդարում: Իհարկե, խորհրդային համատեքստում նման հարդարանքը չուներ զուտ դեկորատիվ նշանակություն, բայց նաև ծառայում էր որոշակի հարացույցերի գաղափարախոսական բացահայտ ու «թաքնված» ներազդման համար:





«ԾԻԼՆ ՈՒ ԱՐԵՎԸ»
ՀՀ ԳԱԱ կենսաքիմիայի ինստիտուտի շենք

Ի տարբերություն Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելոռուսիայի՝ Հայաստանում խճանկարը հարաբերականորեն քիչ է գործածվել շենքերի արտաքին հարդարման նպատակներով: Բացի նրանից, որ խճանկարների իրականացումը չափազանց ծախսատար գործ էր, դրանց տեսողական միջամտությունը քաղաքային տարածության մեջ թերևս այդքան էլ նպատակահարմար չէր համարվում Երևանի առանց այդ էլ գունեղ ու խայտաբղետ միջավայրում, որում տուֆով երեսպատումն արդեն իսկ ստեղծում էր որոշակի խճանկարային էֆեկտ (այդ իսկ պատճառով ճարտարապետները սովորաբար նախընտրում էին մոնոխրոմ հարթաքանդակների գործածումը): Այնուամենայնիվ, 1970-ականների սկզբին, մոդեռնիստական, պարզ երկրաչափական ծավալներով լուծված շենքերի ֆասադներում որոշակի տարածում գտավ մոնումենտալ խճանկարների՝ որպես հակադիր գունային շեշտի գործածումը: Դրանցից առավել տիպայինն ու հաջողված օրինակներից է 1970-ին կատարված Գիտությունների ակադեմիայի կենսաքիմիայի ինստիտուտի շենքը զարդարող «Ծիլն ու արևը» 8 մետրանոց պանոն:
Մկրտիչ Քամալյանի, Կարապետ Եղիազարյանի և Ցոլակ Ազիզյանի կողմից նախագծված այս ահռելի խճանկարը տեսանելի ու ըմբռնելի է շատ հեռվից իր բարձրադիր դիրքի շնորհիվ: Պանոյի չափազանց պարզեցված, բանաստեղծական ձևերում թաքնված է կենսաքիմիայի խորհրդանշական քարոզչությունը, որն այդ տարիներին ձգտում էր դրականորեն պատկերել գիտության «կենսարար» ներգործությունը գյուղատնտեսության ոլորտում: Մյուս կողմից էլ, խճանկարի պատմողականությունից զուրկ, խիստ ոճավորված և էքսպրեսիոնիստական ոճը հուշում է խորհրդահայ արվեստի ազատականացման և անհատականացման անբեկանելի գործընթացի մասին:









«ՆԵՐՓԱԿ ԿՈՐԵՐԸ» ԵՎ «ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ»

«Մերգելյան» ինստիտուտի գլխավոր մասնաշենք

Հովհաննես Մինասյանին են պատկանում նաև Երևանի առավել նշանակալի, բայց այժմ դժվարհասանելի (քանի որ գտնվում են մասնավոր գրասենյակների տարածքում) խճանկարներից երկուսը՝ «Մերգելյան» ինստիտուտի գլխավոր մասնաշենքում գտնվող «Ներփակ կորերը» և «Երկրաչափական տարածությունը»: Մի քանի մասից բաղկացած այս աշխատանքները յուրօրինակ են ոչ միայն իրենց ահռելի ծավալներով (ամբողջապես ծածկում են մի քանի երկար պատ), այլև կատարման ու պատրաստման ձևերով: 1968-ին ստեղծված այդ խճանկարները զարգացնում էին այն մոտեցումները, որոնք Մինասյանն արդեն իսկ դրսևորել էր 1966-ին արված «Մոսկվա» կինոթատրոնի Ամառային կինոդահլիճի «Ռիթմեր» խճանկարում:

Այդ գործերը բացառիկ նորամուծություն էին Երևանի քաղաքային միջավայրում իրենց վերացական ձևերով, որոնք թեպետ և ներշնչված էին մաթեմատիկական բանաձևերից, սակայն տեսողական առումով դիտվում էին իբրև գաղափարախոսական որևէ միտում չպարունակող հանդուգն «ֆորմալիստական» փորձարկումներ: Նորարարական էր նաև խճանկարի «ֆլորենտական» տեխնիկան, որով քարի կտորները ոչ թե հավաքվում էին իրար հետ, այլ ագուցվում էին «ֆոնային» սալիկի ճշգրտորեն կտրված հատվածներում: Արդյունքում, խճանկարը նմանվում էր հաստոցային գեղանկարչության կամ բնական լանդշաֆտի՝ ստեղծելով միասնական ու ներդաշնակ միջավայր:

Վերացական արվեստի նման կատարյալ գործածումը հանրային տարածքում փաստում է հայկական ճարտարապետության առաջադիմական չափազանց բարձր մակարդակի մասին 1960-ականներին՝ թույլ տալով նաև անվերապահորեն դասել Մինասյանի խճանկարները խորհրդային արվեստի առավել կարևոր ձեռքբերումների շարքին: Ցավոք, 2000-ականներին ինստիտուտի սեփականաշնորհումից հետո շենքում իրականացվել են կոնստրուկտիվ ձևափոխումներ, ինչի հետևանքով խաթարվել է խճանկարային արվեստի այս գլուխգործոցի ամբողջականությունը:



«ԱՂՋԻԿԸ ԵՂՆԻԿԻ ՀԵՏ»

«Շողակաթ» հեռուստաընկերության մասնաշենք

Հետաքրքիր է նշել, որ մոնումենտալ արվեստի այդ միջոցն ընդհանրապես չի գործածվել խորհրդահայ ճարտարապետության մեջ 1960-ականներից առաջ: Խնդիրը մի կողմից հաստատված ավանդույթների պակասն էր, մյուս կողմից՝ հայկական ճարտարապետության «խստաշնչությունն» ու խճանկարների իրականացման ծախսը: Հետևաբար, խճանկարային առաջին փորձերը խորհրդահայ արվեստում բավական կամերային ու համեստ են իրենց ծավալներով:
Այդ առումով օրինաչափ է Կիրովի անվան մշակույթի պալատի (այժմ՝ «Շողակաթ» հեռուստաընկերության մասնաշենք) նախասրահում գտնվող «Աղջիկը եղնիկի հետ» պանոն: 1930-ականների վերջին կառուցված շենքը 1961-62 թվականներին ենթարկվել էր վերակառուցման, որի ընթացքում պալատի ներսույթը ստացավ ճոխ նոր ձևավորում՝ ի դեմս նկարիչ Հովհաննես Մինասյանի հեղինակած «Շուրջպար» որմնակարի, քանդակազարդ աղբյուրի և դեկորատիվ այլ տարրերի:
Ամենայն հավանականությամբ, ազգային տարազով օրիորդի խճանկարը նույնպես արվել էր Մինասյանի էսքիզների հիման վրա, քանզի այն իր ոճով շատ մոտ է որմնանկարի վառ, «գոգենական» ձևերին: Կոպտատաշ, խոշոր սալիկներով հավաքված խճանկարը բնորոշում է այդ արվեստի միջոցի սկզբնական, «նկարազարդողական» էտապը հայկական արվեստում ու արտահայտում է վերջինիս հիմնական նախասիրություններն ու թեմաները 60-ականներին՝ դարձ դեպի բնություն, խաղաղության, կյանքի բերկրանքի ու ազգային ավանդույթների փառաբանում:
Այդ ամենն իհարկե փոքր-ինչ զավեշտալի էր «Նաիրիտ» քիմիական գործարանի աշխատողների ակումբում, սակայն նման արվեստը նպաստում էր հասարակության մեջ ազգային ինքնության փնտրտուքի ու էկոլոգիական գիտակրթության առաջխաղացմանը, որն ի վերջո բերեց «Նաիրիտի» փակմանն ու ԽՍՀՄ-ի վերջնական փլուզմանը:

ՆԱԽԱՍՐԱՀԻ ԴԵԿՈՐԱՏԻՎ ՊԱՆՈ

Շենգավիթի Սբ. Աստվածամայր բժշկական կենտրոն

Ուստի զարմանալի չէ, որ 1980-ականների սկզբից մոնումենտալ արվեստը Հայաստանում, այդ թվում և խճանկարը, համատարած կերպով կիրառվում է հիմնականում դեկորատիվ նպատակներով: Աննշան կամ վերացարկված բովանդակային պարունակությամբ այդ պատկերներում ի հայտ են գալիս օրնամենտալիզմի ու էկլեկտիզմի տարրեր, որոնց միակ գործառույթը կարելի է համարել 80-ականների անդեմ «տիպային» կառույցներին որոշակի աշխուժություն հաղորդելը:
Այդպիսի հետաքրքիր նմուշ է 1980-ականների սկզբին կառուցված պոլիկլինիկաներից մեկի (ներկայումս Շենգավիթի Սբ. Աստվածամայր բժշկական կենտրոն) նախասրահի դեկորատիվ պանոն: Գունազարդ հախճասալերով հավաքված բարձրաքանդակ այս պատկերը հեռու է ավանդական խճանկար լինելուց, սակայն իր էությամբ ներկայանում է որպես տարատեսակ միջոցների, նյութերի ու հատկապես ոճերի «կալեյդոսկոպ»:
Պանոյի սյուժեն շատ բնորոշ է այդ տասնամյակի հայկական մոնումենտալ ու հաստոցային արվեստում տարածված հակումներին՝ կյանքի «իմաստը» կամ էությունը արտահայտող ընդհանրացված պսևդոփիլիսոփայական/հոգևոր սիմվոլիզմ, մարդու ու բնության ներդաշնակություն, և այլն: Դժվար չէ գուշակել, որ պանոն իրականում պատկերում է աստվածաշնչյան դրախտավայրը՝ երկնային գետով և կենաց ծառով հանդերձ: Տրամաբանական է ենթադրել նաև, որ այս գունեղ պանոն միտված էր փոքր-ինչ մեղմելու կատարելապես անտարբեր, մոդուլար ճարտարապետությամբ կառուցված բժշկական հաստատություն այցելող հիվանդների ներքին անհանգստությունը:
Այստեղ, սակայն, առավել հետաքրքիր է նկարչի կոնցեպտուալ լուծումը, որը, հակադրվելով խճանկարի տրամաբանությանը, ոչ թե միաձուլում է մասնիկները մի ամբողջության մեջ, այլ բաղդատում է այն առանձին վերացական ու պատկերային դրվագների: Նման հատվածային կամ «կոլաժային» մոտեցումը որոշակի աղերսներ ունի միջազգային արվեստի արդիական (պոստմոդեռնիստական) տենդեցների հետ: Այստեղ կարևորվում են մակերեսը, ոճական խաղերը, տեսողական հանդիսանքը և հաճույքը, որը գալիս է փոխարինելու իրականությունը քննադատորեն մեկնաբանելու և ուղղորդելու արվեստի նախկին՝ ավելի ծանրակշիռ և կառուցողական առաքելությանը:

«ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ» ՌԵՍՏՈՐԱՆԻ ԽՃԱՆԿԱՐԸ

ԺՏՆՑ-ի համալիր, Շիրակի փողոց

1950-ականներից հետո հայ արվեստագետներն ու ճարտարապետներն աշխատել են խուսափել բացահայտ պրոպագանդայի կիրառումից հանրային տարածքների ձևավորման մեջ: Խճանկարային արվեստում դրանց հատուկենտ օրինակները, այնուամենայնիվ, դեռևս կարելի է հանդիպել Երևանի ծայրամասերում գտնվող լքված գործարանների ու որոշ վարչական և հասարարակական շենքերի տարածքներում: Դրանցից թերևս ամենատարօրինակը Չարբախում կառուցված ԺՏՆՑ-ի համալիրի «Վասպուրական» ռեստորանի խճանկարն է:
Ապակեպատ ֆասադով այս դասագրքային, մինիմալիստական կառույցի կողային ճակատին է հառնում կոպտատաշ սալիկներից հավաքած մի խառնաշփոթ կոմպոզիցիա, որում իրար կողք են խցկվել Վերա Մուխինայի «Բանվորն ու կոլտնտեսուհին» արձանը, Զվարթնոցի խոյական ու արծիվը, Հայրենական մեծ պատերազմի հուշակոթողը, արևն ու չգիտես ինչու... Սատուրնը: Կոմունիստական ու ազգայնական նշանների այս տձև կծիկն ավելի շատ առնչվում է խորհրդային մշակույթի «կիտչին», քան արվեստային լուրջ դրսևորմանն ու անկասկած կատարվել է որևէ ժողվարպետի և ոչ թե մասնագիտացված արվեստագետի կողմից:

Այնուամենայնիվ, «Վասպուրականի» խճանկարը պատմամշակութային չափազանց խոսուն արտեֆակտ է, որն այսօր աշխատում է որպես խորհրդային կարգերի գաղափարախոսությունների՝ միգուցե միամիտ, միգուցե դիտավորյալ հեգնանք:

***

Եթե խորհրդային տարիներին հանրային արվեստը համարվում էր թեկուզ քաղաքականորեն ուղղորդված կերպով հասարակություն կերտող կարևորագույն գործիք, ապա 1990-ականներից հետո այն դադարում է որևիցե էական դեր ունենալ հանրային ու քաղաքային տարածքների կազմակերպման ու ձևավորման գործում: Լավագույն դեպքում ինչ-որ չեզոք զարդանախշի (իսկ վատագույն դեպքում՝ օլիգարխիկ կիտչային ճաշակին ծառայող գործիքի) վերածված մոնումենտալ արվեստն այլևս չի գործում որպես հավաքական միջավայր ու գիտակցություն սնուցող միջոց: Այդ դերն այսօր մեծամասամբ իր վրա է վերցրել փողոցային արվեստը, կամ սթրիթ արթը, որում նաև նշմարվում են խճանկարի վերաիմաստավորման համեստ, բայց և խոստումնալից փորձեր: ■

ՍԱԿՐԱԼ ԼԵՌՆԵՐԻՑ ԴԵՊԻ ՊՐՈՖԱՆ ՔԱՂԱՔ. ԵՐԵՎԱՆԻ ՎԻՇԱՊԱՔԱՐԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Այս ամռանը հայտնի դարձավ, որ Հայաստանի Հանրապետությունը հայտ է պատրաստում վիշապաքար կոթողները ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության նախնական ցանկում ընդգրկելու համար: Մինչդեռ քչերը գիտեն, որ այդ խորհրդավոր կոթողներից յոթը գտնվում են Երևանում: ԵՐԵՎԱՆԻ խնդրանքով ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Արսեն Բոբոխյանը պատմում է, թե ինչ է ընդհանրապես հայտնի վիշապաքարերի մասին և ինչով են յուրահատուկ Երևանում գտնվող նմուշները (որոնք պարտադիր պետք է տեսնել սեփական աչքերով):

Արսեն Բոբոխյան

Բիայնա Մահարի, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ

Ինչ է վիշապաքարը

Վիշապաքարերը Հայկական լեռնաշխարհի բարձրադիր արոտավայրերում հայտնաբերված և կենդանական պատկերագրությամբ օժտված հուշարձաններ են: Նրանց անվանումը թերևս առնչվում է հին ավանդույթներին, որոնցում վիշապները կարող էին կապվել լեռներում ապրող հսկաների հետ: Անունը կարող էր նաև առաջանալ պատկերագրության այլաբանական մեկնաբանության արդյունքում:

Վիշապաքարը բրոնզեդարյան երևույթ է (գոյության հիմնական դարաշրջանը միջին և ուշ բրոնզի դարերն են՝ Ք.ա. 3-րդ հազարամյակի երկրորդ կես – 2-րդ հազ. վերջեր): Այս հուշարձանների մոտ 150 օրինակ է հայտնի այսօր, որոնցից մոտ 100-ը Հայաստանի Հանրապետության տարածքում:

Վիշապաքարերն ունեն 150-550 սմ բարձրություն, պատրաստված են բազալտից և ըստ ձևի ու պատկերագրության բաժանվում են երեք տիպի՝ ցլակերպ (քառակող, հաստ սալաքարի տեսքով, դիմային մասում հիմնականում ցլի գլխի և վար ընկած վերջույթների պատկերով), ձկնակերպ (կտրվածքում կլորավուն, քանդակված ձկան տեսքով՝ կրելով ձկան անատոմիական մանրամասներ), ձկնացլակերպ (կրում է նախորդ երկուսի հատկանիշները):



Որտեղ են գտնվում վիշապաքարերը

Վիշապաքարերի մեծ մասը գտնվում է սկզբնական տեղում՝ հորիզոնական դիրքով ընկած: Սակայն երեք տիպերն էլ մշակված և քանդակված են բոլոր կողմերից, բացի «պոչից», ինչն ակնհայտորեն վկայում է այն մասին, որ դրանք նախապես եղել են կանգնած:

Վիշապաքարերը հիմնականում հանդես են գալիս խմբերով՝ ծովի մակերևույթից մոտ 2300-3200 մ բարձրության վրա, հստակորեն սահմանված գոգավոր մարգագետինների միջավայրում, ինչն էապես քչացնում է նրանց տեսանելիության աստիճանը: Առկա են նաև մեկուսի օրինակներ ծովի մակերևույթից մոտ 1200-2300 մ վրա:

Վիշապաքարային բարձրադիր ծիսական ոլորտի ամենակարևոր հուշարձանն Արագածի հարավային բարձունքներին գտնվող Տիրինկատարն է, որը հայտնաբերվեց մեր արշավախմբի կողմից 2012 թվականին: Վերջին տասը տարվա պեղումների ընթացքում մարգագետնի կենտրոնական հատվածում մեր արշավախմբին հաջողվել է փաստագրել 12 վիշապաքար՝ իրենց տեղում կամ սկզբնական դիրքից ոչ հեռու: Տիրինկատարը վիշապաքարերի մինչ այժմ հայտնի ամենամեծ կուտակումն է մեկ սրբազան լանդշաֆտի միջավայրում:

Երևանի վիշապաքարերը

1960-ականների երկրորդ կեսից սկսած տարբեր տարիներին Երևան են տեղափոխվել 7 վիշապաքար, որոնցից մեկը Արագածից (Քարակապ 1), մնացած 6-ը՝ Գեղամա լեռներից (Արշալույսի սար 5, Գեղարդա լիճ 2, 3, 5, Գողթի սար 1, Սախուրակ 2): Բոլոր դեպքերում տեղափոխման հիմք է եղել կոթողների պահպանության ձգտումը՝ ելնելով դրանց բացառիկ նշանակությունից:

Երևանի վիշապաքարերից յուրաքանչյուրն ունի իր անհատական պատմությունը և սակրալ լեռներից դեպի պրոֆան քաղաք ճանապարհորդել է յուրովի: Հնագիտական հուշարձանների տեղահանությունն ի սկզբանե սխալ է. դրա միակ արդարացումը հեռուներում գտնվող հուշարձանի պահպանության ձգտումն է:

Մյուս կողմից՝ վիշապաքարերի առկայությունը ներկայիս Երևանում կարող է փոխադրել սրբազան միջավայրը վար և փոխել քաղաքային մթնոլորտը համապատասխանաբար: Գուցե Երևանի վիշապաքարերը պահպանում են մեր քաղաք-պետությունը:

Սակայն մեր գերխնդիրը պետք է դառնա վիշապաքարերի վերադարձը դեպի լեռներ՝ դեպի ապահով լեռներ: Գուցե նախնական կարգի վերականգմամբ կվերականգնվի նաև ներկայիս կարգը...

ԳԵՂԱՐԴԱ ԼԻՃ 3

Մատենադարանի բակ

Ցլակերպ

Գեղամա լեռների հարավային բարձունքներին գտնվող Գեղարդա լճի տարածքում հայտնաբերված ութ վիշապներից մեկն է: 1970-ականներին տեղափոխվել է Մատենադարանի բակ: Վիշապաքարն ամբողջական վիճակում է:

ՔԱՐԱԿԱՊ 1

«Կենտրոն» հեռուստաընկերության (նախկին Ֆիզիկայի ինստիտուտի «Կուլտուրայի տուն») դիմաց

Ցլակերպ

Հայտնաբերվել է 1927 թվականին Հուշարձանների պահպանության կոմիտեի արշավախմբի կողմից (ղեկավար՝ Աշխարհբեկ Քալանթար) Արագածի հարավային լանջերի «Քարակապ», «Ջհանգիր աղայի յայլա» վայրում, որ այժմ ժողովուրդը կոչում է «Պրոսպեկտ»: Հնագետ-վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանի արխիվային մի լուսանկարում (1936 թ.) Ամբերդի արշավախմբի անդամներն այս կոթողի շուրջն են խմբված: Մոտ 1960-ին կոթողն Արտեմ Ալիխանյանի նախաձեռնությամբ «Պրոսպեկտից» տեղափոխվել ու կանգնեցվել է Արագածի տիեզերական ճառագայթների հետազոտման կայանի տարածքում, ապա 1968-1969-ին բերվել է Երևան՝ ներկայիս տեղը:
Կոթողը լավ վիճակում է, պահպանվել են պատկերի բոլոր մանրամասները:

ՍԱԽՈՒՐԱԿ 5

Նախկինում՝ Օղակաձև այգի, այժմ՝ Սարդարապատ

Ձկնացլակերպ

Բացի վերոհիշյալ վիշապաքարերից, Երևանին առնչվում է նաև ձկնացլակերպ Սախուրակ 5-ը՝ վիշապաքարերի գլուխգործոցը, որն այժմ գտնվում է Սարդարապատի հուշահամալիրում՝ հայոց ազգագրության թանգարանի բակում: Լավրենտի Բարսեղյանի մի հաղորդման համաձայն՝ Հայկական ՍՍՀ Պետշինի ճարտարապետական հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության հատուկ թույլտվությամբ Գեղամա լեռներից երկու վիշապաքար՝ Սախուրակ 2-ը և 5-ը, տեղափոխվում և տեղադրվում են Երևանի Օղակաձև զբոսայգում, Մոսկովյան փողոցի հատվածում: Կոնկրետ երբ, չի նշվում, բայց դա պիտի լիներ 1970-ին կամ առաջ (լուսանկարիչ Վիկտոր Գորկինի մի լուսանկարում կոթողն Օղակաձև այգու հարավային հատվածում է արդեն 1968-1969 թթ.), քանի որ Սախուրակ 5-ը 1970 թվականին տեղափոխվում է Լուվր՝ «Հայաստանի մշակույթն Ուրարտուից մինչև մեր օրերը» ցուցահանդես, ապա 1973-ին՝ Լոս Անջելես՝ Հայաստանի մշակույթին նվիրված ցուցահանդես: 1978 թվականի սեպտեմբերի 13-ին հայ արվեստի պրոբլեմներին նվիրված միջազգային գիտաժողովի բացման օրը (որը համընկավ Սարդարապատի թանգարանի բացման հետ) վիշապաքարը տեղադրվեց թանգարանի առջև:

ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՍԱՐ 5

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան

Ցլակերպ

Այս բացառիկ՝ 5 գլխանի ցլերով/հորթերով բնորոշվող վիշապաքարը մեզ ցույց տվեց հովիվ Վիջայ Խալիտովը 2018 թվականի օգոստոսին: Խալիտովն իր ընկերների հետ դեռևս 2011-ին տեսել էր քարը Գեղամա լեռների հարավային լանջերին գտնվող Արշալույս գյուղի արոտավայրում: Քարի տակը փորել էին, այն հանել մեծ մեքենայով, որի ընթացքում կոթողը կոտրվել էր մի քանի մասի: Ելնելով գտածոյի անկրկնելի լինելուց և վերականգնման նպատակով՝ բնօրինակը 2021-ին իջեցվել է Երևան, իսկ կրկնօրինակը տեղադրվել նախնական տեղում (քանդակագործ՝ Վաղարշակ Եղիազարյան):
2022 թվականին նկարիչ Հրաչյա Վարդանյանի նախաձեռնությամբ բնօրինակը մասնակցել է Starmus VI փառատոնի Dragonstone: The Message of the Rock ցուցահանդեսին, որը տեղի է ունեցել Գյումրիի Տեխնոլոգիական կենտրոնում՝ «Ապոլոն 16»-ի լուսնագնաց Չարլի Դյուքի ու iPod-ի հիմնադիր և iPhone-ի համահիմնադիր Թոնի Ֆադելի մասնակցությամբ:
2023-ի գարնանը վիշապաքարը Գյումրիից տեղափոխվել է Առինջ գյուղ և ժամանակավորապես հանգրվանել քանդակագործ Հարություն Կարապետյանի արվեստանոցում: Այստեղից տեղափոխվել է «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան և 2023-ի մայիսին դրվել թանգարանի դիմացը՝ «Թանգարանների միջազգային օրվա» և «Թանգարանային գիշեր» համաեվրոպական ակցիայի իրականացման համատեքստում:
Կոթողը և նրա պատկերը պահպանվել են ամբողջությամբ, թեև մոնոլիթ քարը բաժանված է մի քանի մասի:

↓ Վիշապաքարը
Գողթի գերեզմանոց

ԳՈՂԹԻ ՍԱՐ 1

Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի բակ

Ցլակերպ

Տարածքը, որտեղից բերվել է վիշապաքարը, գտնվում է Գեղարդից դեպի Գեղամա լեռները գնացող ճանապարհին և կոչվում է Չայրասի: 1986 թվականին վիշապաքարը դուրս է եկել հողի տակից մելիորացիայի ժամանակ: Հուշարձանը տեղափոխող Գողթ գյուղի բնակիչ Հրաչ Հայրապետյանի հայրը՝ Կարաբալա Հայրապետյանը, որդուն խնդրել է, որ այդ քարը մահից հետո դնի իր գերեզմանի վրա: Հայրապետյանը մահանում է 1992 թվականին և Հրաչը երկու տասնյակ համագյուղացիների հետ 1993-ին բարձում է վիշապաքարը մեքենայի վրա և բերում Գողթի գերեզմանոց: Գեղարդի (այժմ Երևանի Սբ. Սարգսի) քահանա Տեր Պետրոսը տեղեկանում է, որ մի վիշապաքար ուզում են որպես խաչքար տեղադրել գերեզմանի վրա և կանխում է այս քայլը՝ արգելելով պատմական հուշարձանի վերաօգտագործումը: Տեր Պետրոսն այդ մասին տեղեկացնում է ճարտարապետ Ստեփան Նալբանդյանին: Վերջինս այցելում է Գողթ, որից հետո նախաձեռնությունը դադարեցվում է:
Մինչ 2001 թվականը քարը մնում է Գողթի գերեզմանոցում, ապա Ստեփան Նալբանդյանի կողմից տեղափոխվում է Երևան՝ Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի բակ (Կառավարական 3-րդ շենք): Այն կանգնեցվում է նույն թվականին ինստիտուտի տնօրեն Աշոտ Գրիգորյանի կողմից: Վերամբարձ կռունկը և բետոնն անում է շինարար Վազգեն Պողոսյանը: Չնայած այս տեղափոխումներին, կոթողը լավ վիճակում է, թեև մասնակիորեն մաշված է ձախ աչքը, իսկ գլխամասի ձախ հատվածը կոտրված է:

Վիշապաքարերի վերարտադրությունները Երևանի ժամանակակից միջավայրում

Երևանում վիշապաքարը ներկա է նաև որպես ժամանակակից արվեստի միավոր: Մատենադարանի նախասրահում կարող ենք տեսնել Վան Խաչատուրի որմնանկարը, որտեղ վիշապաքարը կենտրոնական դեր է խաղում հայ մշակույթի պատմության համատեքստում: Տիգրան Մեծի պողոտա 2 հասցեում՝ Հանրապետության հրապարակին կից, շենքի հիմքին քանդակված է մի վիշապաքար, որը կարծես պահում է այդ շենքը (կերամիստ՝ Մանվել Բաղդասարյան, 1990-ական թթ.): Silk Road հյուրանոցում կան երկու վիշապաքարերի քանդակներ (քանդակագործ՝ Ռաֆիկ Սարգսյան, 2000-ական թթ.): Վիշապաքարի քանդակ է առկա նաև Մալաթիայի այգում (քանդակագործ՝ Սամվել Մարտիրոսյան, Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված քանդակագործական գիտաժողովի 2015 կազմակերպիչներից, որի առթիվ էլ դրվել են այգու քանդակները): Այս օրինակներն ինչպես նմանակում են հայտնի վիշապաքարերը, այնպես էլ վերացարկում դրանք:



↑ *Օղակաձև զբոսայգու վիշապաքարն ըստ Մառի և Սմիրնովի 1909 թ. լուսանկարի*

Վիշապների հետազոտությունը

Վիշապաքարերն առաջին անգամ հայտնաբերվել են 19-20-րդ դարերի սահմանին և հետազոտվել տարբեր մասնագետների կողմից, որոնք ենթադրում էին, թե այդ կոթողները ջրաբաշխական համակարգերի հանգուցակետերին գտնվող հուշարձաններ են: Վաղ շրջանի հեղինակների կողմից հիմնական շեշտը դրվում էր վիշապաքարերի խորհրդապաշտական բնույթի մեկնության վրա. առանց էապես կարևորելու հնագիտական համատեքստը:
Վերջին տասնամյակում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ԿԳՄՍ նախարարության Կրթության և գիտության կոմիտեի, ինչպես նաև Բեռլինի Բաց համալսարանի ու Վենետիկի համալսարանի հովանու ներքո սկսվեց գիտական համագործակցություն, որի հիմնական նպատակն է հետազոտել վիշապաքար երևույթը ժամանակակից հնագիտության մեթոդներով: 2012-ի ամռանը տեղի ունեցավ առաջին ճանաչողական հետախուզությունը, որի խնդիրն էր ստուգել նախկին հետազոտողների տվյալները վիշապաքարերի տեղադրության վերաբերյալ, ճշտել տեղահանված վիշապաքարերի նախնական դիրքը, փորձել նոր կոթողներ հայտնաբերելու հնարավորությունը: Այս աշխատանքի արդյունքում արշավախումբը տեղեկություններ հավաքեց ավելի քան 100 վիշապաքարերի վերաբերյալ, որոնց գրեթե կեսը նախկինում անհայտ էին: Հիշյալ վիշապաքարերի զգալի մասն իրենց նախնական տեղում էին, այլապես հաջողվեց ճշտել նրանցից որոշների սկզբնական տեղադրությունը:

Վլադիմիր Սարգսյան

ԳԵՂԱՐԴԱ ԼԻՃ 2 և ԳԵՂԱՐԴԱ ԼԻՃ 5

Վիշապների պուրակ, Նոր Նորքի 2-րդ զանգված

Ցլակերպ, ձկնակերպ

Ցլակերպ Գեղարդա լիճ 2-ը հայտնաբերվել է Նիկողայոս Մառի ու Յակով Սմիրնովի կողմից 1910 թվականին Գեղամա լեռների հարավային բարձունքներին գտնվող Գեղարդա լճի տարածքում: Ձկնակերպ Գեղարդա լիճ 5-ը հայտնաբերվել է հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի կողմից 1963 թվականին (ղեկավար՝ Լավրենտի Բարսեղյան): Այս վիշապաքարերն իրենց նախնական տեղից տեղահանվել են 1970-ականներին, երբ Գեղարդա լիճն ընդլայնվում էր, և վերադրվել Նոր Նորքի այգում:
Բացի այս երկու կոթողներից, որոնք, ի դեպ, լավ պահպանված վիճակում են, պուրակում տեղադրված են նաև 16-րդ դարի մի քանի տապանաքարեր:

ՍԱԽՈՒՐԱԿ 2

Օղակաձև այգի (Պոպլավոկի հարևանությամբ)

Ձկնացլակերպ

Հայտնաբերվել է Նիկողայոս Մառի և Յակով Սմիրնովի արշավախմբի կողմից 1909 թվականին՝ Գեղամա լեռների հարավային բարձունքների Վիշապներ կամ Աժդահա Յուրտ արոտավայրում (այսօր այն կոչում են «Կաթի պունկտ»): Հայկական ՍՍՀ Պետշինի ճարտարապետական հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության հատուկ թույլտվությամբ Սախուրակ 5 վիշապաքարի (ներկայումս Սարդարապատի թանգարանի առջև) հետ տեղափոխվել է Երևան և տեղադրվել Օղակաձև զբոսայգում, Մոսկովյան փողոցի հատվածում:
Սախուրակ 5-ը եղել է այգու հարավային հատվածում արդեն 1968-1969-ին, ինչը խոսում է այն մասին, որ այս վիշապաքարը ևս կարող էր ավելի վաղ իջեցված լինել: Նախ այն գտնվել է Մոսկովյան փողոցում՝ խորեոգրաֆիկ դպրոցի դիմացի կանգառի մոտ, ուր մնացել է մինչև 1999 թվականը, ապա վերստին տեղափոխվել է լճակի հարավ-արևելյան հատված՝ դրվելով կիսով չափ հողի մեջ, իսկ 2010 թվականին տեղափոխվել է այդ տեղից քիչ հեռու՝ պատվանդանի վրա:
1995 թվականին մի քանի ամսով տարվել է գերմանական Բոխում և ցուցադրվել քաղաքի թանգարանում տեղի ունեցած «Հայաստան. մի հին մշակութային լանդշաֆտի վերահայտնագործումը» ցուցահանդեսին:
2020 թվականին կոթողը ԿԳՄՍ նախարարության, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ու Կալիֆորնիայի Արարատ-Էսկիջյան թանգարանի ջանքերով կանգնեցվել է ճիշտ՝ ուղղահայաց դիրքով Օղակաձև այգու արևելյան հատվածի հրվանդանի վրա: ■

← *Սախուրակ 2 վիշապաքարի հայտնաբերվելու վայրը*

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄՈԴԵՌՆԻԶՄԻ ԹԱՔՆՎԱԾ ՈՒՂԵՐՁԸ

Նկարիչ Նվարդ Երկանյանը պատմում է, թե ինչու չի կարելի կորցնել խորհրդային մոդեռնիստական ճարտարապետական հուշարձանները և հուշում, թե հատկապես որոնց է պետք ուշադրություն դարձնել Երևանում: Նկարազարդումները՝ Երկանյանի «Բետոնե տեսիլք» գրքից:

Նվարդ Երկանյան



Նվարդ Երկանյան



→ ԺՆՏՑ համալիրը
Չարբախում

Մեծանալով անկախ Հայաստանում՝ ես միշտ գերվել եմ խորհրդային մոդեռնիստական ճարտարապետական հուշարձաններով: Այս շենքերի ֆուտուրիստական ծավալներն ինձ հիշեցնում էին այլմոլորակայինների տիեզերանավեր, որոնք տեսել էի ֆիլմերում, և ամեն անգամ, երբ գտնվում էի այդ շենքերից մեկում, երևակայությունս ինձ տանում էր ճանապարհորդության՝ հայտնաբերելու նոր և անհայտ աշխարհներ: Աչքերս զննում էին խորաքանդակներն ու խճանկարները՝ փորձելով գտնել թաքնված հաղորդագրություններ ապագայի մասին: Ավելի ուշ, ժամանակի ընթացքում, հասկացա, որ թաքնված ուղերձը վերաբերում էր հենց իրենց փխրունությանը և խոցելիությանը: Անկախ Հայաստանում քաղաքական փոփոխությունները հանգեցրին նրան, որ այդ հուշարձաններից շատերը քանդվեցին կամ քայքայվեցին քաղաքաշինական նոր զարգացումների բերումով: Այդ պրոցեսներից մասնավորապես մեկը մեծ նշանակություն ունեցավ ինձ համար իբրև ստեղծագործող:

2010-ին կինո «Մոսկվայի» ամառային դահլիճի սեփականատերերը որոշեցին տարածքն օտարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, որպեսզի նրա տեղում վերակառուցվի ժամանակին մոտակայքում տեղակայված և 1930-ականներին քանդված 7-րդ դարի Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցին: Բացօթյա դահլիճն արդեն իսկ աղճատվել էր տարիների ընթացքում և գտնվում էր բավականին վատ վիճակում, իսկ փողոցի կողմից այլևս տեսանելի չէր, քանի որ առջևում կառուցվել էր սրճարան, որն ամբողջովին փակում էր այն, ինչ մնացել էր դահլիճից: Անսպասելիորեն կարծես թե մոռացված կինոդահլիճը քանդելու վտանգը մեծ բողոքի ալիք բարձրացրեց մասնագիտական և քաղաքացիական շրջանակներում և մեզ հաջողվեց կասեցնել հուշարձանի քանդումը: Շարժման հաջողությունը հնարավոր դարձավ նաև սոցցանցերի շնորհիվ, որոնք հետագայում ինձ համար ևս գործիք դարձան «Բետոնե Տեսիլք» նախագիծը կոնտեքստավորելու և լայն շրջանառության մեջ դնելու համար:

← «Արագիլ» սրճարան

***

2016-ին, երբ մեկնեցի Ֆլորենցիա ուսանելու, առաջին նկարազարդումն արեցի՝ Սևանի Գրողների հանգստի տան ճաշարանի շենքը: Նկարազարդումը մեծ համակրանք ու հետաքրքրություն առաջացրեց, և հուշեց ինձ, որ սա կարող է շարունակական նախագիծ դառնալ՝ նվիրում հայ մոդեռնիստական ճարտարապետությանը և արվեստային ակտիվիստական քայլ, փորձ՝ պահպանելու եթե ոչ ճարտարապետական հուշարձանները, ապա հիշողությունը դրանց մասին:
Նախագիծը հետագայում նաև միջազգային ուշադրության արժանացավ՝ հրապարակվելով The Guardian-ում, Arch Daily, My Modern Met, Creative Boom, Elle, World Architecture Community և շատ ուրիշ պարբերականներում, ինչն օգնեց ևս մեկ անգամ հաստատել, որ այս ժառանգությունն արժանի է մեր հոգատարությանն ու ուշադրությանը:
Նկարազարդումները հետագայում վիրտուալ տարածքից դուրս եկան և սկսեցին տպագրվել, հայտնվել մարդկանց տներում, նրանց կենցաղում՝ պայուսակների, բարձերի, հեռախոսի պատյանների, ցնցուղի վարագույրների և շատ այլ տարօրինակ մակերեսների վրա: Այս տարի նաև հրատարակվեց «Բետոնե Տեսիլք» գիրքը, որը հավաքեց գրեթե բոլոր նկարազարդումները մի տեղում: Ետ բերելով այս հուշարձաններն առօրյա, պահպանելով նրանց մասին հիշողությունները՝ ես հույս ունեմ, որ պատկան մարմինների և քաղաքացիների կողմից ցանկություն կառաջանա նոր կյանք տալ և վերաիմաստավորել այս ճարտարապետական կոթողները:

↑ Ավտոբուսային կանգառ Երևանում



Նվարդ Երկանյանի՝ հայ մոդեռնիստական ճարտարապետությանը նվիրված գրաֆիկական շարքից շուրջ 30 աշխատանք ընգրկվել է նկարչուհու առաջին հեղինակային պատկերագրքում: «ՄանԲան» արվեստի հրատարակչության հրատարակած «Բետոնե տեսիլքն» ուրվագծում է խորհրդահայ մոդեռնիզմի նշանակալի ձեռքբերումները արվեստագետի ինքնատիպ և գունեղ գրաֆիկական գործերի միջոցով:

← «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճ

↑ *Երևանի ճոպանուղու կայարան*

***

Այս շարքի ստեղծման ընթացքում ես հարցազրույցներ եմ վերցրել տարբեր տարիքի անհատների հետ և հավաքել հիշողություններ, երազանքներ և երևակայություններ, որոնք կապված են այս հուշարձանների հետ և ներառել դրանք իմ ստեղծագործությունների մեջ: Կարծում եմ, որ այս անձնական և զգացմունքային մոտեցումը դիտորդին ավելի խոր պատկերացում է տալիս մարդկանց վրա այս շենքերի ազդեցության մասին և ինչպես են դրանք հիշվում և ընկալվում: Այս նկարազարդումները վերաբերում են ոչ միայն այս շենքերի ֆիզիկականությանը, այլ նաև այն հույզերին, գաղափարներին և հիշողություններին, որոնք դրանք առաջացնում են: Ընդհանուր առմամբ, իմ շարքը արտացոլում է իմ շարունակական ուսումնասիրության ուղիները, որոնցով կառուցված միջավայրը ձևավորում է մեր ինքնությունը և մեր հարաբերությունները շրջապատող բնապատկերի հետ, անհատական և հավաքական հիշողությունների կարևորությունը:
Կարծում եմ, որ այս շենքերը, որոնք ժամանակին եղել են առաջընթացի և հզորության խորհրդանիշներ, այժմ կանգնած են որպես անցյալ դարաշրջանի մասունքներ: Դրանք ոչ միայն կարևոր են հիշելու և պահպանելու, այլև անցյալի և ներկայի մասին մտածելու և դրանք հասկանալու, ինչպես նաև ապագան պատկերացնելու համար»: ■

Ռելոկանտական Երևան

2022 թվականի մարտից Երևան տեղափոխված հազարավոր ռուսաստանցիները տարատեսակ ժամանցի նոր վայրեր բացեցին քաղաքում՝ ստեղծելով յուրահատուկ միջավայր: Երևանյան ժամանցային կյանքի զարգացմանը հետևող մշակութային լրագրող և կինոքննադատ Դիանա Մարտիրոսյանը ներկայացնում է մի քանի կարևոր վայրեր՝ առաջին սթենդափ-ակումբից մինչև տիպիկ ռուսական ռյումոչնիներ:

Դիանա Մարտիրոսյան

@aristandupclub

ARI STAND-UP CLUB ՍԹԵՆԴԱՓ ԱԿՈՒՄԲ

Վարդանանց 18

Ռուսաստանահայ կոմիկ արտիստներ Էդուարդ Հովսեփյանը, Գարիկ Օգանեսյանը, Արտյոմ Քալանթարյանն ու Արթուր Չապարյանը վաղուց էին հայտնի ռուսալեզու սթենդափի սիրահարներին: Իսկ նրանց հիմնած ari-ն Երևանում առաջին մասնագիտացած սթենդափ ակումբն է: Այն կարողացավ սթենդափ ելույթներ առաջարկել երևանցի հանդիսատեսին մշտական ռեժիմով և բավական բազմազան, բազմաժանր: Ակումբի ելույթները սովորաբար ռուսերենով են և անգամ հայազգի կոմիկները գրեթե միշտ կատակում են ռուսերենով՝ խոսելով ռուսաստանյան մարդու խնդիրներից և ռուսաստանցու դիրքերից: Այնպես որ քաղաքի դեռևս միակ սթենդափ ակումբն իր օրակարգով, մենախոսություններով ու ռեֆլեկտիվ, վերլուծական ու վերջիվերջո կատակերգական նյութերով առայժմ հանդես է գալիս Ռուսաստանից անորոշ ժամանակահատվածով Երևան վերադարձած բարեկամի տեսքով, ով թեև հաճախ բողոքում է տեղական խնդիրներից, փորձում հարմարվել տեղական նիստուկացին, բայց շատ հաճախ բարձրաձայնում է այն ամենը, ինչի մասին երևանցին դժգոհում է արդեն վաղուց: Կան նաև այլ ձևաչափեր, որտեղ, օրինակ՝ կոմիկները շփվում են որևէ ոլորտի մասնագետի հետ (Ask a Pro) կամ հումորային կերպով փորձում լուծում տալ հանդիսատեսի խնդիրներին (How Can We Help You?): Հինգշաբթի օրերին բեմը հանձնվում է հայախոս կոմիկներին:

ПЭУ ԲԱՐ

Սարմենի 72

Ռուսաստանյան Esthetic Joys ստեղծագործական համայնքն անձամբ ինձ հայտնի էր 2022 թվականի իրադարձություններից շատ ավելի շուտ, միավորման գեղարվեստական ղեկավար և կրեատիվ տնօրեն Իլյա Կուանիրովիչը զբաղվել է փառատոներով, համերգներով և տարատեսակ երաժշտական ժամանցային գործունեությամբ: Հաշվի առնելով իր մոսկովյան փորձը՝ տրամաբանական էր, որ Երևանում ևս նա կբացի մի վայր, որտեղ կկարողանան հավաքվել իր հետաքրքրությունները կիսող ներգաղթյալներ և տեղացիներ: Սարմեն փողոցում՝ կանաչ վազերի մեջ թաղված, բաց վարդագույն պատերով և Esthetic Joys-ի երկար դրոշաձողով այս վայրն իր կոնցեպտով ու քաղաքականությամբ առաջացնում է տարբեր էմոցիաներ: Ակնհայտ է, սակայն, որ երևանյան Կենտրոնի առանձնատներում տեղակայված սակավաթիվ բար-սրճարաններն այս էսթետիկան և տրամադրությունը երբեք չեն ունեցել: Այնպես որ ՊԷՍ-ն հարմար տարբերակ է տաք եղանակին կոկիկ այգում թարմացնող հեղինակային կոկտեյլներ վայելելու, իսկ ներսը՝ պաստելային գույների մեջ այդ նույն կոկտեյլները կամ եվրոպական խոհանոցի զանազան խորտիկներն ու մի քանի հիմնական ուտեստ փորձելու համար: Այստեղ կարող եք նաև խաղալ նարդի, բիլիարդ ու շախմատ կամ պարզապես գալ նախաճաշի. երևանցին, հավանաբար, կզգա իրեն մեր քաղաքի համար ուրիշ՝ ավելի շուտ մոսկովյան երանգով միջավայրում:

@esthetic.joys.embassy



@druzhba.evn

«ԳԱԴՅՈՒԿԱ» ԲԱՐ

Վարդանանց 15/2

Ռուսաստանցիները մեծացրեցին երեկոյան ալկո-վայրերի քարտեզը և հասան անգամ Գնունի-Վարդանանց խաչմերուկ: Կահույքի, լամպերի և տան համար պարագաների խանութների արանքում հայտնվել է օլդ-սքուլ մթնոլորտով երկարաձև տարածքով «Գադյուկա» բարը, որտեղ կարելի է համտեսել հեղինակային թրմօղիներ: Ինչպես և մեկ տարի առաջ նույն ձևաչափով բացված «Դրուժբայում», այստեղ էլ խմիչքը պատրաստում են sous vide տեխնոլոգիայով և չեն սահմանափակվում ավանդական լիմոնչելո և բալ համատեսակներով:

«Գադյուկայում» բացի ելակի, բալ-պուերի կամ ընկույզի և հնդկաձավարի համի խիստ սպեցիֆիկ թրմօղուց, կան որոշ օրիգինալ խորտիկներ, օրինակ՝ ազնվամորի-չիլի սոուսով ու հալապենյոյով պանրային գնդիկներ կամ այլ կծու սթարթերներ (խրթխրթան կծու հավ կամ կծու խաշած կաղամբով ֆրի):

Ժամանակ առ ժամանակ կազմակերպվում են արհեստային ու արվեստային ակտիվություններ՝ համերգներ, նկարչության դասընթացներ, խաղեր, իսկ իմ այցելության օրը տեղի էր ունենում ռուսալեզու սթենդափի open mic ելույթ: Այնպես որ, եթե թրմօղիների սիրահարներն ուզում են շփվել ռելոկանտների (կամ էլ նման ձևաչափի սիրահար երևանցիների) հետ, ընկղմվել ռուսաստանյան հակասնդուսափայլ, անմիջական միջավայր և միաժամանակ զբաղեցնել իրենց որևէ միջոցառմամբ՝ չլքելով սեղանը, ապա սա ճիշտ վայրն է:

@gadyuka.bar

@set.bar_evn

SET ՍՐՃԱՐԱՆ ԲԱՐ

Սարյան 17

Եթե ռուսաստանցիների բացած սրճարաններն իրենց կոնցեպտով, դիզայնով ու առաջարկվող ուտելիքների բազմազանությամբ սովորաբար այդքան էլ գրավիչ չեն հայաստանցիների պահանջկոտ քիմքին, ապա մոտ կես տարի գործող SET-ը չի պատկանում դրանց շարքին: Չունենալով շատ լայն ուտեստների տեսականի՝ ժամանակին այս տարածքում գործող ZaNaZan սրճարանի փոխարեն բացված SET-ը հարմար ու գրավիչ վայր է նախաճաշերի, աղանդի ու սուրճի սիրահարների համար: Ֆիրմային մակով խմորեղենը սրճարանի այցեքարտերից է, բացի այդ, անգամ երեկոյան սառնարանի ցուցափեղկում կարելի է գտնել այլ քաղցրավենիք՝ բրաունի թխվածքաբլիթներ ու մրգային մոչիներ, հեղինակային ռաֆ սուրճ և սակավաթիվ, բայց արդեն գնահատված ու պահանջարկ վայելող հիմնական ուտեստներ՝ բոլորն էլ իտալական ծագմամբ:

Բացի այդ, կան աղցաններ, նրբաբլիթներ ու ապուրներ: Կարծում եմ՝ SET-ի հաջողության գրավականն այն է, որ մայրաքաղաքներում ապրող մարդկանց, այդ թվում երևանցիներին, ժամանակ առ ժամանակ պետք են նոր վայրեր, որտեղ կարելի է պարզապես համեղ նախաճաշել կամ բռանչ անել (չնայած երեկոյան ժամերին էլ այստեղ այցելուները շատ են): Սարյանի դիմացի մայթը գերհագեցած է և մասնագիտացած հենց գինիների վրա, և այս հանգիստ, համեղ սնունդով ու թրենդային առաջարկներով վայրը, կարծես, բալանսավորում է ակտիվ փողոցի գաստրոառաջարկների ընտրանին:

COMMON GROUND BOOKS AND SPIRITS
ԳՐԱԽԱՆՈՒԹ-ՍՐՃԱՐԱՆ

Մարշալ Բաղրամյան 6

Բաղրամյան պողոտայի առանձնատները, որտեղ կես դար առաջ ապրում էին գիտնականներ ու մշակութային գործիչներ, միշտ աչքի են ընկել գրավիչ ճարտարապետությամբ և գողտրիկ պարտեզներով, որոնք հազվադեպ էին օգտագործվում որպես հանրային վայրեր: 2023-ի կեսերին (վերջապես) Բաղրամյան 6 հասցեում նման առանձնատներից մեկը բացեց իր դռները հին ու նոր երևանցիների համար. Common Ground-ն առաջարկում է գրախանութ, դասախոսությունների, երաժշտական միջոցառումների, գինու համտեսների և պարզապես սրճարանի ձևաչափ: Քանի որ առանձնատունն ունի ընդարձակ այգի, այն լոկացիան դարձնում է խիստ գրավիչ ամառային միջոցառումների համար: Քաղաքի կենտրոնում նման խոտածածկ և կանաչապատ տարածքները քիչ են, որոնք էլ կան՝ չեն շահագործվում որպես հանրային վայրեր:

Գրախանութում կարելի է գտնել ռուսական այն հրատարակիչների արտադրանքը, որը հազվադեպ է հասնում այլ երևանյան գրախանութներ (կինոյի ու արվեստի շատ գրքեր, ոչ մանկական գրաֆիկական նովելներ և այլն): Սրճարանի մենյուից այցելուներն առանձնացնում են չորս պանրով ու ծիրանով պիցցան և իտալական կալցոնե կարկանդակի տեսքով ժենգյալով հացը, բայց, կարծում եմ, սովորաբար մարդիկ այստեղ գալիս են միջավայրի և հանգստի համար. էլ որտե՞ղ Բաղրամյանում կարելի է գիրք գնել, լսել կենդանի երաժշտություն կամ դասախոսություն և գինի վայելել՝ փրկվելով մարդաշատ փողոցներից:

@commonground_yerevan

ՄԻՐ

Չարենց 37

Ով կմտածեր, որ Գերմանիայի դեսպանության և Նարգիլայանոցի արանքում կհայտնվի էմիգրանտական վայր, որտեղ հնարավոր կլինի և դաջվածք անել, և շյուղերով գործել, և հեղինակային կինո դիտել: «Միր», որը գործում է մոտ կես տարի, տեղակայված է թափանցիկ, ցուցափեղկային դռների ետևում: Դրսում դրված է մի քանի հարմարավետ կտորից բացվող աթոռ (այդպիսիք սովորաբար ունենում են փորձառու արշավականները), իսկ դրանց կողքին ցածր կանիստրները, որոնց վրա կարելի է ուտել, օրինակ, մեծ պանրային հոթդոգը՝ մատուցված կարտոնե ամանիկի մեջ:

«Միրում» կինոգետ Պավել Օռլովը ժամանակ առ ժամանակ դասախոսություններ և կինոդիտումներ է վարում, իսկ գարեջրի սիրահարները, եթե պետք է զբաղեցնել ձեռքերն ու թեթևացնել գլուխը, գալիս են խմիչքի շուրջ սքեչեր նկարելու կամ շյուղերով գործելու: Բացի այդ, այստեղ կարելի է նաև նկարել ակվարելով կամ մասնակցել անգլախոս ակումբի: ■

@mir.evn

evnmag.com

կարդացեք առցանց

Գարաժային ապրումներ



← Գարաժային կուտակումները Երևանում

Մարիա Գունկո

Մեր օրերում զարմանալի տրանսֆորմացիա սկսեցին ապրել Երևանյան ավտոտնակները: Եթե ժամանակին դրանք օգտագործվում էին ուղիղ գործառույթով՝ ավտոմեքենան ապահով պահելու համար, երբեմն որպես խորդանոց, որոշ դեպքերում՝ ավտոարհեստանոց կամ լվացման կետ բացելու համար, ապա այսօր ավելի ու ավելի հաճախ գարաժներում բացվում են սրճարաններ, խանութներ և այլ հանրային տարածքներ: Թեմայի մեջ խորացել է ԵՊՀ պրոֆեսոր, Օքսֆորդի համալսարանի ասպիրանտ, միգրացիոն հետազոտությունների մասնագետ, աշխարհագրագետ Մարիա Գունկոն:

«Նա միացրեց լույսը, նա փակեց ավտոտնակը». այսպես է սկսվում սովետական ռոք-ռահվիրաներ Նաուտիլուս Պոմպիլիուս խմբի երգերից մեկը, որը պատմում է փոքր քաղաքում երկու սիրեկանների պատմությունը: Երկուսն էլ ամուսնացած էին և չէին կարող հանդիպել հանրային վայրերում: Ավտոտնակը դարձել էր նրանց սիրո հանգրվանը, իսկ հետո նաև գերեզմանոցը. զոյգը խեղդվել էր կարբոնի մոնոքսիդի արտահոսքից: Այս երգը թերևս կարող էր հիմնված լինել իրական դեպքերի վրա:
Ժամանակակից Երևանում ավտոտնակները շատ ավելի խոր արմատներ ունեն, քան դրանց ֆիզիկական պատերը: Սա ազատության տարածք է, որն ազատագրում է ընտանեկան իրականության հուզական ճնշումից, ինչպես նաև հանրային ու պետական պահանջներից: Զարմանալի չէ, որ արհեստավորներին և գործարարներին այդքան հարմար այսպես կոչված՝ «գարաժային տնտեսությունը» Երևանում գոյություն է ունեցել շատ վաղուցվանից, սակայն վերջին տարիներին նոր թափ է առել: Այսօր Երևանի կենտրոնի բակերում կարելի է հանդիպել բազմաթիվ, թույլ տվեք օգտագործել այդ բառը, «հիփսթերահարված» ավտոտնակներ, որոնցում տեղակայված են սրճարաններ, բարեր ու խանութներ: Եթե նախկինում գարաժները մարգինալացված, չհրապուրող միավորներ էին, ապա հիմա դարձել են գրավիչ հանրային վայրեր, հատկապես ստեղծագործ մարդկանց համար:
Այս նոր տեսակի գարաժների հաջողությունը Երևանում ակնհայտ է: Ավելի ու ավելի գարաժատերեր վերափոխում են իրենց շինությունները նոր տեսակի օգտագործման համար: Հաշվի առնելով նաև անշարժ գույքի օրեցօր աճող գները՝ սրանցով ավելի հեշտ է գտնել վարձակալողներ, ինչի շնորհիվ ոլորտն ավելի ու ավելի կփոխվի:
Ներկայացնում ենք հինգ պատմություն ավտոտնակների մասին, որոնք խորհրդանշում են նորության և ներառականության համար պայքարը:

Մարիա Գունկո

Մարիա Գունկո, 8որ, facebook.com

ՕՐ

Երևանյան ավտոտնակների հիփսթերահարման սկիզբը

Ի հակառակ տարածված կարծիքի, թե այս շարժումը սկսվել է ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում ռուսաստանցիների մեծ տեղափոխման հետևանքով՝ գործընթացը սկիզբ է առել դեռևս 2020-ին: Նախաձեռնողը հայ-ռուս մի զույգ էր:

«Ցրրի (*կարդացվում է «օրոր» – խմբ.*) պատմությունը կապված է կնոջս անցյալի հետ,– պատմում է Սաշան, որը սկսել էր այս նախագիծը կնոջ՝ Մարիամի հետ:– Նա ծնվել ու մեծացել է Երևանում՝ կրելով ու սիրելով քաղաքի էսթետիկան, որից անբաժանելի է գարաժային շերտի խառնաշփոթն ու ջերմությունը... Երբ Մոսկվայից Երևան տեղափոխվեցինք, սկսեցինք տարածք փնտրել միկրոբիզնեսի համար, մի տարածք, որը մերը կլիներ, գոնե որ կարողանայինք փոփոխել ըստ մեր ցանկության: Երեխայիս հետ օրերով թափառել եմ Երևանի բակերով: Ի վերջո, հայտնաբերեցինք մի լքված ավտոտնակ, որի մեջ ծառ էր աճում»:

Սաշան ու Մարիամը հայտարարություն փակցրեցին՝ «Կվարձակալենք ձեր ավտոտնակը կոմերցիոն նպատակներով, խնդրում ենք՝ զանգահարեք»: Գարաժի տերը զանգեց զուտ հետաքրքրությունից ելնելով՝ ո՞ւմ մտքով կարող էր անցնել վարձակալել այդ անպիտան ավտոտնակը և ի՞նչ գործի համար: Երկար-բարակ բանակցություններից հետո զույգը ստացավ համաձայնությունն ու սկսեց լայնածավալ փոփոխությունները:

«Ինձ դուր է գալիս, որ բնակիչներն ունեն հնարավորություն փոփոխելու քաղաքն ու ստեղծել նոր տարածքներ: Շինությունների տարատեսակ կցակառուցումները կարելի է դիտարկել որպես նյութական հայտարարություն... Ես ուզում էի օգտվել այդ ազատությունից»,– ասում է Սաշան:

Ցրրում վաճառվում էին դիզայներական ձեռագործ նմուշներ՝ տան համար: Դրանք ստեղծվում էին աշխարհի տարբեր ծայրերում: Կարևոր նրբություն. վաճառվող իրերը մեծամասամբ տան համար էին. «Մենք տեղափոխվել էինք Երևան երկու ճամպրուկով, այնպես որ տան համար իրերի խանութ բացելը խորհրդանշական քայլ էր մեր կողմից, այդպես մենք էլ մեր համար էինք փորձում նոր տուն ստեղծել...»

Ցրրն աշխատեց ավտոտնակում շուրջ երկու տարի, բայց ի վերջո տարածքի տերը դուրս հանեց Սաշային ու Մարիամին: Այժմ խանութը գործում է միայն օնլայն:

Սաշան մինչև հիմա լավ չի պատկերացնում, թե որն էր պատճառը. «Մենք որոշեցինք շատ չխորանալ, քանի որ ի վերջո գարաժն իրենն էր, իր անձնական ազատության տարածքն էր ու մենք պիտի հարգենք դա»:

Ցրրին հաջորդեց ևս մի քանի նախաձեռնություն, որոնք արդյունքում կազմեցին յուրատեսակ գարաժային կոոպերատիվ՝ Սարյան փողոցում ու մոտակայքում: Դրանց թվում են «Ոչ լույս, ոչ մութ» սուրճի խանութը, «Հումմուս Կիմչի» սրճարանը, «Վոլչոկ» զգեստի խանութը և «Ռեյջե Գարաժ» վինջաժի խանութը: Առաջին երկուսի գաղափարները Ցրրի պես ծնվել են դեռ քովիդի համավարակի ժամանակ, իսկ մյուս երկուսն իսկապես ռելոկացիայի ալիքի արդյունք են:



ոչ լույս ոչ մութ

Բավական երկար ժամանակ սուրճի ոլորտում աշխատելուց հետո Կառլենը որոշել էր սեփական խանութը բացելու մասին, բայց դա գրեթե անհնար էր սահմանափակ բյուջեի պայմաններում: Ցրրի Սաշան էր, որ հուշել էր ավտոտնակային տարածքների մասին:

Վանաձորցի Կառլենը հիշում է, որ 1988-ի երկրաշարժից հետո իր բարեկամները դեռ երկար ժամանակ ապրում էին գարաժներում՝ վախենալով նոր ցնցումներից: Մի պահ իրենց ընտանիքի մետաղյա գարաժում միաժամանակ ապրել է 12 հոգի: Այնպես որ՝ միտքը, որ ավտոտնակը կարող է ծառայել ոչ միայն ավտոներին, նոր չէր Կառլենի համար:

Մի քանի ամիս փնտրելուց հետո նա գտավ խաղողի ծառով գեղեցիկ գարաժ Սարյանում: Հիշում է, որ դժվար էր տիրոջը համոզելը, քանի որ նախկինում բակում մի արգենտինական բար է եղել, որը մեծ դժգոհություններ է առաջացրել բնակիչների շրջանում:

«Մի քանի ամիս գարաժը վերանորոգելիս ես ամեն օր շփվում էի տեղացիների հետ ու բացատրում, թե ինչպիսին է լինելու խանութը, որ մենք միայն սուրճ ենք վաճառելու, առանց ալկոհոլի ու սննդի...– հիշում է Կառլենը,– Հայաստանում ամեն բնակիչ դիտարկում է բակը որպես անձնական տարածք, տան շարունակություն, որտեղ երեխաներն են խաղում: Այդ պատճառով է, որ անվստահություն են զգում, երբ օտար մարդիկ գալիս են բակ ու անում, ինչ ուզում են: Բացման օրվանից ու մինչ օրս ես անձամբ հետևում եմ մեզ մոտ եկող բոլոր մարդկանց, որ հանկարծ չխանգարեն տեղի բնակիչներին»:

Կառլենը համոզված է, որ եթե գործ ես անում բակում, պետք է ենթարկվես այն մշակութային նորմերին, որոնք ընդունված են այդ տարածքում. «Իրականում, ինչքան էլ փորձես վերափոխել տարածքը, միևնույն է՝ դու մնում ես գարաժում, որը բակային սոցիալական կյանքի անբաժան մասն է»:



Hummus Kimchi-ն ընտանեկան բիզնես է, որը հիմնել են հրեական արմատներով քույր ու եղբայր, ինչպես նաև նրանց ամուսինները, որոնցից մեկը հայ է, մյուսը՝ մասամբ կորեացի: Հիմնադիրներից մեկը՝ Սաշան, կատակում է, որ սրճարանը, որը գտնվում է Երևանում, բայց մասնագիտացած է հրեական ու կորեական խոհանոցի ուղղությամբ, իրենց չորսի խառնուրդն է: Ամուսնու՝ Տիգրանի հետ, Սաշան երկար տարիներ ապրել է Մոսկվայի ու Երևանի միջև: Սրճարանի գաղափարը ծագել է, երբ Սաշայի եղբայրը՝ Դիման, Իսրայելում ավարտել է խոհարարական դասընթացները: Իսկ Երևանում ավելի արագ ու էժան կլիներ, քան Մոսկվայում: Նրանք հատուկ գարաժ չեն փնտրել, պարզապես պետք էր մատչելի ու հարմար տարածք՝ սրճարանի համար անհրաժեշտ մինիմալ պայմաններով, ցանկալի է՝ բազմամարդ փողոցներից ոչ հեռու: Եվ ահա, երբ նկատեցին այս գարաժը, պարզվեց, որ այնտեղ ամեն ինչ կա, նույնիսկ թոնիր: «Զարմացել էի, մտածեցի՝ այդ ի՞նչ է եղել սրանից առաջ... Պարզվեց, որ նախկին ավտոտնակն արդեն հասցրել էր վերափոխվել բանջարեղենի խանութի, հետո փուռի, հետո նույնիսկ մի ազգայնական կուսակցության գրասենյակի: Տարօրինակ տեղ էր: Բայց մարդիկ կարծում էին, որ մե՛ր գաղափարն էր տարօրինակ՝ խոհանոցների խառնուրդ, գարաժ, մեծ ընդհանուր սեղան. Երևանում, ասում էին, ոչ ոք այդպես չի նստի»:

Hummus Kimchi-ն բացվեց 2022-ի սկզբին և արագ հաջողություն ունեցավ: Շուտով հենց սրճարանի տակ բացվեց Shin բարը: Սաշան նշում է, որ սրճարանի հաճախորդները հիմնականում ոչ հայեր են, թեև հարաբերակցությունն աստիճանաբար փոխվում է:

«Մենք չենք բացել սրճարան «ռելոկանտների» համար,– վստահեցնում է նա:– Այո՛, մենք ինքներս ներգաղթյալ ենք, բայց այնքա՛ն հաճելի է տեսնել, որ գնալով ավելի ու ավելի շատ տեղացիներ են բացահայտում մեր սրճարանը: Մենք ուրախ ենք ընդունելու խառը մարդկանց՝ երեխաների ու ընտանի կենդանիների հետ, կարևորը բոլորն իրենց զգան ինչպես տանը»:

Ոչ լույս, ոչ մութի հարևան գարաժում գտնվում է 2022-ի ապրիլին բացված «Վոլչոկ» հագուստի խանութը: Մուտքի դուռը հիշեցնում է դիմացի շենքի ճաղապատված պատուհանը. փոքր դետալ, որը խանութը դարձնում է բակի բնական բաղադրիչը:

Վասյան և իր գործընկերները Երևան են եկել 2022 թվականի մարտին՝ ռուսաստանցիների ներգաղթի առաջին ալիքով: Ռուսաստանում մի քանի խանութ ունեցող գործարարները միանգամից սկսեցին տեղ փնտրել նաև Երևանում:

«Նախ՝ տեսանք մի նախագիծ գարաժում՝ ցրրը: Հետո տեսանք «Ոչ լույս, ոչ մութ» խանութը: Մտածեցի՝ սա իրական երազանք է: Գուցե նրանից էր այդ զգացումը, որ փոքր ժամանակ շատ եմ ժամանակ անցկացրել գարաժների մեջ ու շրջակայքում... Գուցե կապված էր էփփլի գարաժային առաջին օրերի մասին պատմություններից, չգիտեմ: Համենայն դեպս, հենց գարաժն էր իրապես համապատասխանում մեր փողոցային հագուստի բրենդի ոգուն: Սա հեշտ հասանելի վայր չէ, մենք մարդաշատ փողոցում չենք, ուրեմն նա, ով գալիս է այստեղ, գալիս է մեզ համար»:

Հարմար ավտոտնակ գտնելու հարցում Վասյան օգտվել էր ցրրի հիմնադիրների խորհրդից. «Մարիամն առաջարկեց հայտարարություններ տպել: Գրեցինք երեք լեզվով՝ «կվարձակալենք գարաժ», ու փակցրեցինք տարբեր տեղերում: Առաջին զանգողները չէին հասկանում, թե ինչներիս է պետք, կարծում էին, թե ավտոարհեստանոցի համար ենք փնտրում: Բայց հետո մի աղջիկ զանգեց, որին շատ զվարճալի թվաց մեր գաղափարը, և նա համաձայնվեց»:

RAGE GA RAGE

«Ես ու ընկերուհիներս գարաժում փարթիներ ենք կազմակերպում ու միշտ կատակում ենք, որ ժամանակին տղերքն էին ասում՝ «գնում ենք գարաժում լռվենք», իսկ հիմա սա լրիվ աղջկական բան է դարձել». այսպես է սկսում իր պատմությունը Արգենիկան՝ 2022-ի դեկտեմբերին բացված Rage Garage վինտաժի խանութի հիմնադիրը:

Նախքան այս խանութը, Արգենիկան երբեք չի զբաղվել վինտաժով, փոխարենը ակտիվ է եղել գիտակից օգտագործման և շրջակա միջավայրի պաշտպանության գործում: Հիշում է՝ ինչպես էր Մոսկվայից Երևան տեղափոխվելիս «ոչ ադեկտվատ հոգեբանական վիճակում» արագ հավաքում ճամպրուկները: Իսկ հասնելիս պարզվել էր, որ հետը վերցրել էր միայն մի շալվար ու ճամփորդությունների ժամանակ գնված ժակետների հավաքածուն: Այս ժակետները հետագայում դարձան իր վինտաժ խանութի սկզբնակետը: Հետագայում հավաքածուն համալրվեց այլ վինտաժ խանութներից կամ միջազգային ճամփորդություններից բերված իրերով, դրանց գումարվեցին տեղացի հայ արհեստավորների պատրաստած սպասքն ու զարդերը:

Իսկ ահա գարաժը, որտեղ այս ամենը հիմա վաճառվում է, պատկանում է Արգենիկայի ընկերներին, որոնք մինչ այդ տարածքն օգտագործել են որպես խորդանոց:

«Մեղմ ասած՝ թափթփված էր,– հիշում է առաջին տպավորություններն Արգենիկան,– ոտքերիս տակ հող էր, պատերին՝ աղի հետքեր: Բայց այ հետևի պատին բնական բազալտի մի կտոր էր. ավտոտնակները կառուցել էին բազալտի հանքի մոտ: Դա նշան էր, քանի որ ժամանակին ես մտածում էի, որ ուզում եմ բնական քարից կանգնակ ունենալ, բայց դա չափազանց թանկ էր: Փոխարենը՝ ստացա բազալտով մի ամբողջ պատ: Սիրեցի այս գարաժն առաջին հայացքից»:

Արգենիկան նշում է, որ գարաժի ներքին հարդարանքը միանգամից հղում է անում տեղական պատմությանը: Պատերի համար օգտագործվել են հին խորհրդային սալիկներ, կանգնակը տուֆից է: Ինչպես և Hummus Kimchi-ի Սաշան, նա էլ կողմնակից է եկվորների ավելի խոր ինտեգրմանը. «Սա իմ անձնական ցավն է: Ես չեմ ուզում, որ սա լինի միգրանտական նախագիծ: Դրա համար մի քանի միջոցառումներ ենք արել՝ հրավիրելով միայն տեղական բիզնեսի ներկայացուցիչներին, երկրորդ հարկում էլ նախատեսում եմ տեղացի էկո-ակտիվիստների համար դասախոսությունների սրահ բացել,– պատմում է Արգենիկան, որը մինչև վեց տարեկան ապրել է Երևանում, հետո նոր տեղափոխվել Ռուսաստան:– Հայրս Ռուսաստանում հիմնականում շփվում էր հայերի հետ, այնպես որ ես շատ լավ գիտեմ, որ ինտեգրման բացակայությունը լավ ազդեցություն չի թողնում»: ■

Նորքի կամուրջը

Արջակագիր Արամ Պաչյանն ուսումնասիրել է Երևանի թաքնված գանձերից մեկը՝ Նորքի կամուրջը, որն այժմ գտնվում է փեղի բնակչի մասնավոր փարածքում:

Արամ Պաչյան

Արամ Պաչյան

Երևանի հնագույն հուշարձաններից մեկը՝ Նորքի կամուրջը, դեռ կա, դեռ կանգուն է. մնացել է մի քաղաքացու առանձնապան բակում: Օրեր առաջ գնացի տեսնելու: Կամրջի շուրջ հողային աշխատանքներ էին անում: Լուսանկարեցի: Երևի առանձնապան սեփականատերն էր. մոտեցավ, հարցրեց՝ ինչու եմ նկարում. ով եմ: Ասացի՝ բնակիչ եմ, եկել եմ կամուրջը տեսնելու: Ասաց, թե կամուրջը միմիայն իր զանգերով է պահպանվել, պետության ջեռքից փրկել է: Ու չմանրամասնեց «փրկության իր զանգը»:
Ամեն տարի «պագնապի» ու «պագնապից» ազատագրվելու իմ «ուխտն» եմ անում. գնում եմ Նորքի հին կամուրջը տեսնելու: Գնում եմ՝ համոզվելու, որ դեռ կանգուն է: Փրկվման ու ավերի պատկերին էլ եմ պատրաստ. ինչ արած, դրանում ևս պիտի համոզվեմ: Հին Երևանի հուշապահը՝ Երվանդ Շահազիզը, գրում է, թե, ըստ նորքեցիների, մի ունևոր մարդ ուխտ է արել ու Երևանում կառուցել յոթ նույնանման կամուրջ, որոնցից պահպանվել է միայն Նորքինը՝ դիմանալով 1679 թվականի ավերիչ երկրաշարժին, դիմանալով Գեղարոի սելավներին:
Սանգուն է մնացել Նորքի հին կամուրջը, դիմադրել և՛ պետության, և՛ երևանցիների անտարբերությանը, տարիներ ի վեր մոռացման նրանց վարժանքներին, որոնցով այնքան հմտացել ու թրծվել են:
Երևանը հին քաղաք է, սակայն հնությունների քաղաք չէ: Անցյալի հուշակոթողներից փշրանքներ են պահպանվել՝ Ափանի կիսավեր տաճարը, կիսավեր Սարմիր կամուրջը, չգիտես, թե ինչ նախախնամությամբ՝ Նորքի հին կամուրջը, Սապույտ մզկիթը (Չարենցի զանգերով):
Ստորև ներկայացնում եմ Նորքի կամուրջը նկարագրող հատվածներ (լուսանկարներով) Սարո Ղաֆադարյանի «Երևան: Միջնադարյան հուշարձանները», Երվանդ Շահազիզի «Հին Երևան» և Վահրամ Դարյանի կազմած «Հայրենագիտական միօրյա արշավ: Ուսումնասիրիր հայրենի երկիրը» գրքերից:

Կարո Ղաֆադարյան. «Երևան: Միջնադարյան հուշարձանները» գրքից:

Փոքրիկ կամուրջ է Նորքի ձորում, Գետառի վրա: Նրա թռիչքը մի խելից մյուսը 6,9 մետր է: Անցյալում այդ կամուրջի նշանակությունը մեծ է եղել: Նրա վրայով են անցել դեպի հյուսիս գնացող առևտրական կարավանները, որոնք հասել են Սևանի ափերը, Վրաստան և ռուսական հարթությունները:

Գետառը թեև փոքրիկ գետակ է, բայց երբեմն հեղեղում է Երևան քաղաքի թաղերը և մեծ վնասներ պատճառում: Նրա վրայի կամուրջները հաճախ քանդվել են Գետառի ավերիչ ուժից, մանավանդ, երբ վարարում է գետը, հսկայական գետաքարեր է բերում: Դրանով է բացատրվում այն, որ Գետառի վրա հին կամուրջներ չեն պահպանվել:

Նորքի այժմյան կամուրջը մոտ 10 տարի է, ինչ գործածությունից դուրս է եկել նախկին նեղ խճուղին լայնահուն պողոտայի վերածվելու և նոր կամուրջներ կառուցելու հետևանքով: Այդ կամուրջն այժմ ճանապարհի կողքին պահպանվում է որպես պատմական հուշարձան:

Նորքի կամուրջը կառուցվել է 1664 թվականին նորքեցի Հովհաննես վարդապետի միջոցներով: Կառուցող վարպետն է, ինչպես երևում է եղծված արձանագրությունից, Գրիգորի որդի Կիրակոսը, սակայն ժամանակի ընթացքում այդ փոքրիկ կամուրջը ևս որոշ փոփոխություն է կրել: Նրա կենտրոնական մասը հնում երկու կողմից ունեցել է վերելք, գրեթե կամուրջի կամարին զուգահեռ, որ սլաքավոր է և կենտրոնում ավելի բարձր է, քան կես շրջան:

Սակայն հետաքրքիր է այն, որ սրբատաշ քարով կառուցված այս կամուրջը դիմացել է բազմաթիվ ջրհեղեղների, ինչպես նաև 1679 թվականի հզոր երկրաշարժին:

Կամուրջի կառուցման գլխավոր արձանագրությունը փորագրված է նրա կամարի վրա: Հովհաննես վարդապետի փակագիր արձանագրությունը պահվում է Հայաստանի պատմության թանգարանում: Վերջին նորոգումները կատարել է Հուշարձանների պահպանության վարչությունը 1950-ական թվականներին:

(Երևան, 1975, «Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի» հրատարակչություն, էջ 43-45):

Երվանդ Շահազիզ. «Հին Երևան» գրքից

Նորքի հին հուշարձաններից առանձին ուշադրության արժանի է Գետառի հին, միակամար կամուրջը, որը ձգված է գետի վրա խոր ձորում. նրա վրա իջնում է Նորքի մեծ բանուկ ճանապարհը, որ անցնելով նրա վրայից, գնում է Ավան և նրա մոտ գտնված գյուղերը: Դա թեև փոքր, բայց մի հաստատուն կարմրագույն սրբատաշ քարից կառուցված շինություն է՝ պարսից տիրապետությունից մնացած, Հրազդանի մյուս շատ կամուրջների նմանությամբ, շինված նույն ոճով ու ճարտարապետությամբ: Կամուրջը կառուցված է, ինչպես երևում է նրա վրա երկու տեղ փորագրված հայոց ՌՃԺԳ թվից, 1664 թվին, ասել է թե դա ներկայումս 264 տարվա շինություն է: Դրա ամրությունն ու հաստատությունը երևում է նրանից, որ դա յուր երկդարուկեսյան գոյության ընթացքում երկար ժամանակ անխնամ մնալով հանդերձ, տակավին այնքան ամուր է, որ կարողացել է և կարողանում է դիմանալ Գետառի հեղեղատին, Գետառի, որ հաճախ վերը՝ լեռներում, տեղացած անձրևներից ու կարկտից այնքան վարարում է, որ բարձրանալով՝ յուր ջրերը թափում է նրա վրայից՝ արմատախիլ արած հաստաբուն ծառերը բերելով և մեծամեծ քարեր գլորելով ու նրան զարնելով: Դրա կամարի վրա մի կողմից կիսաբոլորաձև խոշոր տառերով փորագրված է մի երկկարգ արձանագրություն, որ սակայն դժվարությամբ է կարդացվում տեղ-տեղ եղծված և կամարի երկու կողմի ստորին մասերի քարերի ջարդված լինելու պատճառով:

...Նորքեցիք ավանդաբար պատմում են, որ կամրջի շինողը եղել է մի ունևոր և շինարար մարդ, որ ուխտած է եղել շինել յոթ այդպիսի կամուրջ, և կատարել է յուր ուխտը՝ հետզհետե կառուցելով Գետառի ձորում յոթ միևնույն մեծությամբ, ամրությամբ և ճարտարապետական ձևով կամուրջներ՝ Շահապի, Գետարգելի, Ավանի և այլն, որոնցից սակայն պահպանվել է ամբողջությամբ միայն այդ Նորքինը:

Երվանդ Շահազիզի «Հին Երևան» գրքից (Երևան, «Սուղնի» հրատարակչություն, 2003 թ., էջ 212-213):

Վահրամ Դարյան. Դեպի Նորքի կամուրջ

1949 թվականին Երևանում լույս է տեսել «Հայրենագիտական միօրյա արշավ: Ուսումնասիրիր հայրենի երկիրը» գրքույկը. կազմել է Վահրամ Դարյանը: Այն նախատեսված էր դպրոցականների համար, որոնք քաղաքային զբոսանքներ անելով՝ պիտի ծանոթանային Երևանի հնագույն հուշարձաններին, ուշագրավ վայրերին ու թաղամասերին:

Հայրենագիտական էքսկուրսիայի մեկօրյա մարշրուտն այսպիսինն էր՝ «Համալսարանական թաղամաս – Ղ. Ղուկասյանի պուրակ – Նորքի կամուրջը – Նորքի թաղամասը – Նորքի բերդաձորը – Կենդանաբանական այգի – Բուսաբանական այգի – Քանաքեռ – Խ. Աբովյանի թանգարանի տուն-թանգարանը»:

Գրքույկը տալիս էր սրանց համառոտ նկարագիրը, և ահա Նորքի կամրջի մասին կարդում ենք.

«Նորքի հին հուշարձաններից առանձին ուշադրության է արժանի Գետառի հին, միակամար կամուրջը, որը ձգված է գետի վրա խոր ձորում. նրա վրա իջնում է Նորքի մեծ բանուկ ճանապարհը, որ անցնելով նրա վրայից՝ գնում է Սևան և նրա մոտ գտնված գյուղեր: Դա թեև փոքր, բայց հաստատուն, կարմրագույն, սրբատաշ քարից կառուցված շինություն է՝ պարսից տիրապետությունից մնացած, Հայաստանի մյուս շատ կամուրջների նմանությամբ, շինված նույն ոճով ու ճարտարապետությամբ: Կամուրջը կառուցված է ինչպես երևում է նրա վրա երկու տեղ փորագրված հայոց ՌՃԺԳ թվից, այսինքն մեր թվ. 1664 թվին, ասել է, թե դա ներկայումս 285 տարվա շինություն է:

Կամուրջի կամարի վրայի երկրորդ արձանագրությունից պարզվում է, որ փորագրված թվականները կամրջի պատրաստման թվականներն են, որ շինել տվողը նորքեցի Հովհանը կամ Հովհաննես վարդապետն է, որ կամուրջը շինված է պարսից Շահ Աբբասի (վախճ. 1666)» և հայոց Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի (1655-1680) ժամանակները և շինող վարպետի անունը հավանորեն եղել է Կիրակոս» (էջ 5-6): ■

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՍԹՐԻԹ ԱՐՏ. ՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱՑ ԴԱՍԵՐ

Քաղաքն այլ տեսանկյունից ճանաչելու լավագույն միջոցներից մեկը պատերի հետ խոսելն է: Երևանի հայտնի, քիչ տեսանելի ու դեռ նորահայտ գրաֆիտիների, մուրալների ու սթրիթ արտի այլ ժանրերի ամենահետաքրքիր նմուշներն ուսումնասիրել է սթրիթ արտի վաղեմի երկրպագու, մշակութային լրագրող Էլեն Բաբալյանը:

Էլեն Բաբալյան

Երևանի պատերին ընդունված չէ նկարել: Պատճառները բազմաթիվ են. կամ հարգում են 2800-ամյա քաղաքի պատկառելի տարիքը, կամ չեն գտնում այն պատկերը, որը բոլորի սրտով կլինի և չի վիրավորի բնակիչների զգացմունքները, կամ էլ պարզապես երևանցիները պահպանողական են և դժվար են ընդունում նորը: Ընդունված չէ նկարել և վերջ: Ու այն համարձակ սթրիթ արտիստները, որոնք կարողանում են ձեռնոց նետել հազարամյա կարծրացած արժեհամակարգին, բախվում են անհաղթահարելի թվացող խոչընդոտների շարանի: Բայց ժամանակը հոսում է, առաջ գնում և նույնիսկ մեր դարավոր մայրաքաղաքն իր անհանդուրժող բնակիչներով ի զորու չէ կանգնեցնել սթրիթ արտի տարածումը: Դժվար է ասել՝ երբ առաջին անգամ Երևանի պատերին հայտնվեցին փողոցային արվեստի նմուշներ: Ոմանք կհիշեն 2000-ականների հեղափոխական կոչերով գրաֆիտիները, քաղաքական մեսիջով տրաֆարետները, դե այն «ես քեզ սիրում եմ»-ներն ընդհանրապես հաշիվ չեն: Այդ փուլը մի կերպ հաղթահարեցինք, մինչև եկավ մուրալը՝ մասշտաբային գեղանկարչություն շենքերի պատերին: Հիմա գտնվում ենք այդ փուլի ակտիվ զարգացման մեջ՝ երբ ում խելքին ինչ փչի, երկու օրում նկարում է: Ոլորտը դեռևս ոչ մի կերպ չի վերահսկվում, չկա քաղաքականություն, «կարելիի» ու «չի կարելիի» սահմանազատում:



Ասում են՝ կան չգրված օրենքներ, օրինակ՝ չի կարելի նկարել տուֆի կամ բազալտի վրա, քանի որ փողոցային արվեստի նպատակը գաղջ պատերը գեղեցկացնելն է, իսկ տուֆն ու բազալտը դրա կարիքը չունեն: Սակայն փոքրիկ շրջայցը քաղաքով ցույց կտա, որ կանոնին ոչ բոլոր արտիստներն են ծանոթ: Համարվում է «ոչ կոլեգիալ» նկարել արդեն նկարազարդած պատի վրա, զուտ հարգանք է նախորդ արտիստի նկատմամբ: Չի կարելի նաև նկարել պատմական շենքերի վրա: Երևանի քաղաքապետարանը դեռևս չի ասել իր խոսքը սթրիթ արտի կանոնակարգման հարցում՝ ի տարբերություն հարևան Թբիլիսիի, որտեղ արտիստները ստանում են պետական աջակցություն և որտեղ տարեկան երկու անգամ մուրալի փառատոն է կազմակերպվում: Սակայն Երևանում էլ արդեն կան բավականին հետաքրքիր գործեր, որոնք գտնելու դեպքում ձեր Ինստագրամը կդառնա ավելի գունագեղ:
Այս շարքում առաջինը Կոնդի պատկերասրահն է՝ առայժմ Երևանի միակ հաջողված բացօթյա թանգարանը: Առաջին նկարը ծնվեց 2018-ի օգոստոսյան մի գիշեր՝ Արարատի գագաթները հիշեցնող եռանկյուններ, արմավենի, «մոլոտովի կոկտեյլ»: Առավոտյան դա տեսան կոնդեցիները՝ կոնդեցիք, ու չհավանեցին մոլոտովը: Արարատի հետ խնդիր չկար: Փողոցային պայքարի խորհրդանիշ ինքնաշեն զենքը սպիտակ ներկեցին: Բայց հեղինակը համաձայն չէր իր նկարի նման խմբագրման հետ: **Սերգեյ Նավասարդյանը**, նույն ինքը **yerevantropics-ը**, սկսեց պայքարել, ու մշակութային պատերազմում արձանագրեց իսկական բարոյական հաղթանակ: Կոնդեցիները, որոնց չոր բնավորության և անհանդուրժող լինելու մասին զրույցները չեն դադարում արդեն տասնյակ տարիներ, այնուամենայնիվ, ընդունեցին ու նույնիսկ սիրեցին փողոցային արվեստն ու աստիճանաբար թույլ տվեցին իրենց տների, նեղլիկ փողոցիկների պատերը գունավորել: Տեղի ունեցավ անհնարինը՝ արվեստը մտավ Կոնդ: Ու Սերգեյին միացան այլ արտիստներ աշխարհի տասնյակ երկրներից, այդ թվում՝ ոլորտում լուրջ հաջողություններ գրանցած աշխարհահռչակ սթրիթ արտիստներ: Ու հիմա Կոնդի փոքրնեղլիկ տներում ապրողները կրակն են ընկել ամեն պատի մոտ նկարվող տուրիստների և տեսահոլովակ նկարահանող խմբերի ձեռքը: Սակայն չեն բողոքում, պարզվեց՝ Կոնդում ապրում են ամենահյուրընկալ երևանցիները: Իսկ երևանցիներին Կոնդի պատկերասրահից հայտնի դարձած Սերգեյ Նավասարդյանի սթրիթ արտ աշխատանքները՝ արևադարձային Արարատը, «Կյանք» գրվածքները և այլն, կարելի է տեսնել Երևանի շատ այլ գողտրիկ ու ակնհայտ վայրերում: Եվ ոչ միայն Երևանի:

Մեկ տարի անց Կոնդի ֆենոմենը, որից ապշած էին բոլոր երևանցիները, կրկնվեց ոչ պակաս հոռի բարքերով հայտնի մեկ այլ թաղամասում՝ Չարբախում: **Shakart-ը՝ Շանթ Կարապետյանը**, մի չարբախցի նկարիչ, մի օր որոշեց վերցնել ներկերն ու իջնել նկարելու իր հարազատ շենքի պատին: Ավելորդ է ասել, որ շենքը դրանից միայն շահելու էր, բայց Շանթը նույնպես ստիպված էր վարել իր բաժին պատերազմն ու համոզել, որ չի փչացնում շենքի պատերը: Ժամանակը նրա օգտին էր ու հիմա այլևս ուտոպիստական չի հնչում Չարբախը թանգարանի վերածելու Շանթի երազանքը: Կիսով չափ ջրում սուզված աղջկան հետևեց կիսաքանդ գործարանի պատին հայտնված հրեշտակը: Շանթը դեռևս Չարբախի միակ սթրիթ արտիստն է, տարածքի մենաշնորհ ունի, բայց այս հարցում ևս կարևորը բարոյական հաղթանակն է, այն է՝ արվեստը Չարբախ բերելը:



Մեկ այլ սթրիթ արտիստ Երևան եկավ Արգենտինայից ու բերեց իր հետ փողոցային նկարչության գաղտնագրությունը: Դպրոցից մեզ ծանոթ «վայելչագրություն» առարկային էն գլխից լուրջ վերաբերվող **Վահրամ Ղևոնդյանը՝ Կոտը**, չորս տարի հայերենի այբուբենն ուսումնասիրելուց հետո ստեղծեց իր սեփական գիրը: Նրա տառերը շրջանաձև պար են բռնում քաղաքի ամենագողտրիկ, թաքնված հատվածներում: Մեկ անգամ Կոտի գիրը տեսնողն այն այլևս երբեք չի շփոթի այլ այբուբենի հետ: Չի շփոթի, բայց և չի կարողանա գաղտնազերծել ու միանգամից հասկանալ՝ ինչ է գրված: Բայց նկարչության մասին գիտելիքի ու գուշակության տաղանդը համադրելով՝ հնարավոր է կարդալ Կոտի գաղտնագրած փիլիսոփայական լուրջ հարցերը՝ «Ո՞վ ես դու», «Տեսակ» և այլն:

Գարեգին Հարությունյանը փիլիսոփայական հարցեր չի բարձրացնում, ավելի շատ հակված է ստեղծել գեղեցիկը և ուղղակի տարածել այն: Գարեգինը սթրիթ արտին ունի իր ուրույն վերաբերմունքը. սկզբում նա հանձնում է իր մտահղացումը թղթի կամ կտավին, այնուհետ շրջում Երևանով ու փնտրում նրա տեղն այս աշխարհում: Նրա տարօրինակ թղթե բուդդիստը Պուշկինի փողոցում ապրեց մոտ քսան օր, ֆիդայու պորտրետը Մոսկովյան փողոցում առավել կարճ կյանք ունեցավ: Արտիստը հաճախ չի դիմանում մուրալի գայթակղությանը և, այնուամենայնիվ, թողնում է իր հետքը Երևանում: Ծիծեռնակաբերդի ճանապարհին նրա ռազմահայրենասիրական «Այա-Դեդոն» հայացքով ուղեկցում են և սթափեցնում: Այս օրերին Գարեգինը ստեղծագործական ոգեշնչման հետևից հասել է Բալի ու չի մոռացել իր հետ տանել գույնզգույն սփրեյները: Նրա «Հայի Ոգի»-ները փնտրեք կղզիներում:



Ավանդապաշտ Երևանը բառացիորեն ցնցվեց, երբ նրա պատերին հայտնվեց «Համբույր-2020»-ը: Միջավայրի դիզայներ **Արման Ստեփանյանն** իր 140 քմ ահռելի պատկերի համար ընտրեց «Վստրեչի» կամրջի կողքի շենքի պատը: Ասել, որ բնակիչները երջանիկ էին, սուտ կլիներ: Բայց սիրահար համբուրվող զույգերին դա չէր կարող խանգարել, ինչպես և հոգ չէր քովիդի ժամանակ պարտադրված դիմակը, որով նրանց պատկերել էր նկարիչը: Արմ Ստեփանյանի մեկ այլ մոնումենտալ աշխատանք զարդարում է Հրաչյա Քոչար փողոցի շենքերից մեկի պատը: «Ցատկող կատուն ու լուսինը» առավել անցավ ընդունվեց, հավանաբար, շենքի բնակիչները կենդանասեր են:

Կանանց կերպարներով աչքի չընկնող Երևանը բոլորովին վերջերս զարդարվեց մի շատ թիթիզ մուրալով: Կողբացի 20 հասցեում ամերիկահայ սթրիթ արտիստ **Կարեն Աշիմյանը**, fem.evn օնլայն շոփի հետ համագործակցելով, պատկերեց գեղեցկադեմ մի աղջիկ, որի վրա կոլաժի բոլոր օրենքներով ժամանակ առ ժամանակ հայտնվում են տարատեսակ զարդեր՝ իրական ապարանջան, մատանի, վզնոց և այլն: Այս անդադար փոփոխվող մուրալը, ըստ հեղինակների մտահղացման, Երևանի պես է՝ մի օր ուրախ ու պճնված, մի օր մտահոգ ու անզարդ:

Հետո Երևան եկան ռուսները, ու երևանյան փողոցային արվեստի կյանքում սկսվեց նոր փուլ, երբ առանց այն էլ անվերահսկելին դարձավ ուղղակի անկառավարելի ու սնկի պես աճող: Իրեն համեստորեն «Աշխարհի լավագույն արտիստ» (Ինստագրամի բիոյի համաձայն) համարող **Անատոլի Մոդվագը** անգլերեն Unick (ունիկալ) բառը գրեց Երևանի հնարավոր բոլոր վայրերում (այդ թվում՝ ակնհայտ տուֆի և ճարտարապետական կառույցների վրա) և հնարավոր բոլոր երանգավորումներով: Բացի այդ, Մոդվագն ու մեկ այլ ռելոկանտ՝ **Տանյա Վինոն**, Չարենցի փողոցի սկզբնամասում գտնվող տարիներով լքված ճոպանուղու տարածքը վերածեցին գունազարդ, գույնզգույն կտավի՝ պատկերելով շների ու կատուների մի շարք ցեղատեսակներ: Այս անգամ ոչ ոք չբողոքեց. կամ տարածքը ոչ մեկինն էր (քաղաքապետարանի ականջը խուլ), կամ էլ երևանցիները, իրոք, սիրում են կենդանիներին:

Ի դեպ, իշխանությունների մասին. Բենքսին, որի անունով երդվում են բոլոր ժամանակների բոլոր ազգերի սթրիթ արտիստները, ասում է՝ «Շատ հիասթափեցնող է, երբ հասկանում ես, որ քո գործերի լավագույն հավաքողները ոստիկաններն են»: Փաստ է, որ քաղաքում արված բոլոր գրաֆիտիների ու մուրալների ամբողջական ցանկը հենց նրանց մոտ է, ու թեև արվեստի այս ճյուղը բնավ օրինական չէ Երևանի համար, սակայն քաղաքային իշխանությունները չեն շտապում ջնջել դրանք՝ հավանաբար թաքուն հարգանք ցուցաբերելով արտիստի նկատմամբ: Սակայն պետք է հիշել, որ արվեստ ստեղծելն առաջին հերթին պարտավորեցնող է: Նկարել սիրում են բոլորը, բայց ամեն աշակերտ, որը դպրոցում նկարում էր իր սեղանի վրա, հետո չի դառնում մեծ նկարիչ: Ճիշտ նույն կերպ էլ քաղաքի պատերին նկարող ամեն ոք դեռևս սթրիթ արտիստ չէ: ■

spell

creative marketing agency

let us spell it out for you

SOCIAL MEDIA MARKETING

SEO & PPC

WEB DEVELOPMENT & MOBILE APPS

UI/UX

BRANDING

DESIGN SERVICES

PRINT & DIGITAL MEDIA

CONTENT WRITING

PODCAST PRODUCTION

CONSULTING

PUBLIC RELATIONS

E-COMMERCE

SPELL.AM +374 55 387887



Էրիկ Սրբազանյան/Yerevan Productions

Երևանյան սթրիթ արտ, 2010

2000-ականների վերջում Երևանի պատերին սկսեցին զգուշորեն հայտնվել առաջին գրաֆիտիները։ Քանի որ այն ժամանակ ոստիկանությունն ու քաղաքային իշխանություններն այս ուղղության նկատմամբ շատ ավելի խիստ էին, քան հիմա, հեղինակները սովորաբար չէին բարձրաձայնում իրենց գործունեության մասին ու սթրիթ արտի շատ նմուշներ մնում էին անանուն։ Միջավայրի խստությամբ բացատրվում էր նաև այն ժամանակ տարածված ոճը՝ սթենսիլը։ Նախատեսվող պատկերը նախօրոք տպվում ու կտրվում էր ստվարաթղթի վրա, ապա դրվում պատին ու կտրված մասերը պատվում սփրեյ ներկով։ Այդպես կարելի էր արագ անել գործն ու հեռանալ առանց բռնվելու։ Այդպես է մինչ օրս անում նաև Բենքսին։ ■


patreon.com/evnmag
ազակցեք ձեր սիրելի ամսագրին



The Main
Design Store

@TheMainDesignStore

/

Մեր Մկրտչյան 10
(Միրզոյան գրադարան,
առաջին հարկ)